



## Հայկական գիտահետազոտական հանգույց Armenian Research & Academic Repository



Սույն աշխատանքն արտոնագրված է «Ստեղծագործական համայնքներ  
ոչ առևտրային իրավասություն 3.0» արտոնագրով

**This work is licensed under a Creative Commons Attribution-NonCommercial  
3.0 Unported (CC BY-NC 3.0) license.**

Դու կարող ես.

պատճենել և տարածել նյութը ցանկացած ձևաչափով կամ կրիչով  
ձևափոխել կամ օգտագործել առկա նյութը ստեղծելու համար նորը

You are free to:

**Share** — copy and redistribute the material in any medium or format

**Adapt** — remix, transform, and build upon the material

17154

17155


✓ 17156

17157

17158

891.99

U-39



ԵՐԳԻՉ ԶԱՄԱԼՈՒ

ՔՆՆՐԱԿԱՆ ԵՐԳԵՐԸ



ԱՂԷՔՍԱՆԴՐԱՊՈՂ

ՏՊԱՐԱՆ ԱՔՐԱՀԱՄ Մ. ՄԱԼԻԱՍԵԱՆՑԻ

1892


891.99-1

3757

W

ԵՐԴԻՉ ԶԱՄԱԼՈՒ

ՔՆԱՐԱԿԱՆ ԵՐԴԵՐԸ



ԱՂԷՔՍԱՆԴՐԱԳՈՒ

ՏՊԱՐԱՆ ԱԲՐԱՀԱՄ Մ. ՄԱԼԻՍԱՍԵՆՑԻ

1892

Дозволено цензурою. Тифлисъ, 22 Априля 1892 года.

3699  
47

Типографія А. М. Малхасянца въ Александрополѣ,  
на Александровскомъ ул. д. Теръ-Кеворкова.

1

### ՃԱՄԱՆԱԿԻ ԲԵՐՄՈՒՆԻԲԸ



չքս բացի այս տեսայ, ամէն կողմս  
երգահան,  
Գրածները միտք ունի՞, կամ ո՞ճ  
ունի՞ դուրական,  
Մէկը մեր կեանքից հեռու, մի  
նիւթ առած անարժան,  
Մի քանի թերթ մրոտած, կարծէ  
իրան վիպասան.  
Ես էլ օգուտ քաղելով, մեր այս  
խառն վիճակից,  
Յանկարծ դարձայ բանաստեղծ  
շահուելու ժամանակից:

Մէկը երէկ հովիւ էր, այսօր տեսայ աբեղայ,  
Մէկն էլ մսավաճառ էր, կամ գինեպան քահանայ,  
Փերեզակը դարձել է վաճառական մեծ աղայ,  
Մէկն էլ այլը չէ ճանչում, հոգաբարձու անթիքայ,  
Ես էլ օգուտ քաղելով, մեր այս խառն վիճակից,  
Յանկարծ դարձայ բանաստեղծ շահուելու ժամանակից:

Վաշխառուն է յարգուած, խարդախն ևս առաւել,  
Ով որ ինչ է ցանկանում, նա գործում է անարգել,  
ձարպիկ մարդուն աշխարհում չ'կայ մի բան անվայել.  
Ցուցամոլ ու հացկատակ մարդիքն են առաջ ընկել,  
Ես էլ օգուտ քաղելով, մեր այս խառն վիճակից,  
Յանկարծ դարձայ բանաստեղծ շահուելու ժամանակից:

«Հաստ ու բարակ մէկ դին է», մեր մէջ հնուց ասած է,  
Տաղանդաւոր մարդկերանց համբակից երբ զատած է,  
Մանաւանդ ռամիկ դասը, տիպ տեսաւ՝ համոզուած է,  
Ջամալին լու գրող է, որ երգերը տպուած է.  
Ես էլ օգուտ քաղելով, մեր այս խառն վիճակից,  
Յանկարծ դարձայ բանաստեղծ շահուելու ժամանակից:

2

Գ Ո Վ Ե Ս Տ.

**Ա**յս աշխարհում, ով սիրելի, չեմ ճարում նման քեզի,  
Արդեօք թնչպէս կարողանամ խօսել գովասան քեզի.  
Շատ գեղեցիկ թէպէտ տեսայ, ոչ մինը քեզ չէ յարմար,  
Նոր 'ի նորոյ պարտաւոր եմ ձայնել նոր նշան քեզի:

Սիրող խոնարհ, լեզուդ անուշ, տեսքդ անչափ գեղեցիկ,  
Ոսկիամայրն Անահիտ թողել է պայման քեզի,  
Էակ անհատ, մոլորուել եմ, թէ քեզի թնչ անուանեմ,  
Յակինթ, գոհար կամ ադամանդ, ասեմ կարկեհան քեզի:

Գովեստը իմ Ջամալուցս քոյ յատկութեանց չէ յարմար,  
Շուշան Նարգոս, Վարդ, Բալասան պէտքէ պաճուճան քեզի:

3

Պ Ա Ն Դ Ո Ի Խ Տ.

Նուէր իմ բարեկամ Շահին Շահնազարեանցին.

**Ա**փսոս, երիտասարդ աշխոյժ հասակիս,  
Որ բնիկ աշխարհէս ընկել եմ օտար,  
Թէպէտ առաջ կերթամ մէջ նպատակիս,  
Բայց կարօտով մաշուած հայրենեացս համար:

Հայրենի երկիրը քաղցր կը լինի,  
Օտար ջուրը դառն, թանձր կը լինի,  
Պանդուխտ մարդու լեզուն համր կը լինի,  
Զի կարող նա խօսիլ միշտ ազատ ճարտար:

Ես չեմ կարող պատմել հայրենեաց համր,  
Ո՞ր մէկ բանը գովեմ, որ մէկ խնամը,  
Հայրենեաց մէջ կ'լինի ազգ—բարեկամը,  
Ս.յնտեղ կրնայ գտնել մարդը, բարերարը:

Ջամալիս թնչ ասեմ, ինձ պէս օտար տեղ  
Ընկնող մարդու սիրտը, է միշտ անձուկ—նեղ,  
Թէ ունենայ ապրուստ փառաւոր, շքեղ,  
Գարձեալ նա կը լինի տխուր, անդադար:

4

ՍԻՐԱՀԱՐԻ ՓԱՓԱԳԸ.

**Ա**ռանց քեզ եմ անմխիթար, քաղցր, համեղ սիրուհի, 1,  
Շնորհալի քաղցրաբարոյ, ազնիւ, անմեղ սիրուհի, 2,  
1—2 Այս սողերը կրկնել ամենայն տանց վերջում:

Ընտիր, անուշ խօսքերդ է ցաւերիս զեղ սիրուհի,  
Խանդակաթ սէր ունիմ առ քեզ սիրով զօրեղ սիրուհի,  
Է՞ր քոյ սէրդ ցոյց չես տալիս չքնաղ, շքեղ սիրուհի,  
Նազ անելդ երևումէ ինձի ահեղ սիրուհի:

Ա՛խ, երանի դու էլ փոքր ինչ սէր ունենաս ինձ վերայ,  
Ձեռ մտածում, որ խղճալիս սիրով քեզի է ծառայ,  
Իմ սէրս միշտ քեզ փորձերով ու ակներև կայ ներկայ,  
Կեանքիցս զատ ուրիշ ոչինչ չունիմ յարմար քեզ ընծայ:

Օրը մի հեղ, գոնէ ցոյց տուր քեզ ինձ խաղաղ, հոգեկից,  
Բոպէն թանկ է քեզ տեսնելուս, դեղածիծաղ հոգեկից,  
Իբրև արև, ցոյց նշույղդ, անշամանդաղ հոգեկից,  
Ինչպէս կամիս, այնպէս վարուիմ, ես քեզ մատաղ հոգեկից:

Ուրախութեանս դու ես պատճառ, իմ սիրելի անուշիկ,  
Գու ամեն մի արարածից՝ ինձ համար ես դեղեցիկ.  
Ջամալուս մօտ խիստ հաղուազիւտ ու թանկազին մեղեսիկ,  
Սոխակի պէս ամեն երգս քեզ համարէ վարդ ծաղիկ:

ԱՂԵՐՍ ԱՌ ՍԻՐԵԼԻՆ.

**Ա**րբ, հոգեակ, ինձի մինակ մի թողնիլ,  
Առանց ընկեր, իբրև տատրակ մի թողնիլ,  
Անմխիթար, սիրով պապակ մի թողնիլ  
Սրտիս մէջը դու վառ կրակ մի թողնիլ,  
Ի զուր տեղը անբախդ սոխակ մի թողնիլ,  
Լից կարօտս, սիրոյ փափազ մի թողնիլ:

Սիրով կապուայ, էլ ինչպէս անջատուիմ ես,  
Ձէ կարելի, որ քեզանից զատուիմ ես,  
Հեղահեղ սիրով կը հաստատուիմ ես,  
Քոյ սիրոյդ մէջ պէտք է որ փարատուիմ ես,  
Քեզանից զատ՝ ուրիշից չը զատուիմ ես,  
Արբ այլոց մէջը առակ մի թողնիլ:

Քոյ պատճառով, ասեմ քեզի պարզաբար,  
Կարծիք կայ թէ՛ մի օր ընկնիմ քարէ քար,  
Մէճնունի պէս Լէյլու սիրուն սարէ սար,  
Կայ ապացոյց, որ մշտական քեզ համար,  
Գիշեր ցերեկ կուլամ կողբամ-անդադար,  
Կտրէ ձայնս, լաց, աղաղակ մի թողնիլ:

Խեղճ Ջամալուս լսէ լացն ու կականը,  
Սիրել պէտք է մարդ իւր սրտի նմանը,  
Սիրէ ինձի, ես եմ սրտիդ արժանը,  
Իմացուցի, հասկացուցի այսքանը,  
Լաւ մտածէ բարի սիրոյ վաղճանը,  
Ինձ խեղճ արի, առանց վիճակ մի թողնիլ:

Լ Ա Ւ Մ Ա Ր Գ Ը.

**Ա**ռաքինի մարդը առաքինեաց մէջ,  
Կընդունուի, կը սիրուի, ինչպէս վարդ ազնիւ,  
Բայց ինչ անէ խեղճը ահազինեաց մէջ,  
Երբ որ շատերըն են ամբարիշտ ցրիւ:  
Բարին մտածելով կը մաշէ կեանքը,  
Բարութիւն է նորա փափազը ջանքը,



Ուղղութիւնով սակաւ է աշխատանքը,  
Նա զրկուելով, չունի յարգանք ու պատիւ:

Չամալի, բարեգործ մարդը սակաւ է,  
Վատի չարութիւնը նորան մեծ ցաւ է,  
Բայց ինչ գուզէ լինի, լաւ մարդը լաւ է,  
Լաւ օրինակ կ'լինի ընկերաց անթիւ:

7

Ա Ռ Ս Ո Ւ Ր Բ Կ Ո Յ Ս Ն.

**Ա**ստուածութեան ընդունող եղար տաճար Տիրուհի,  
Մթնապատ ճանապարհիս վառած զամպար Տիրուհի,  
Ի՞նչ խաւարեալ մտացս լոյս ու կամար Տիրուհի,  
Ի՞նչ բարութեան օրինակ, հոգւոյս յարմար Տիրուհի,  
Բարեխօսելու համար, լեզուով ճարտար Տիրուհի:

Ի՞նչ երկնային դրախտից ընտիր ընծայ, հոտով բոյս,  
Առաւօտեան արուսեակ, իսկ լուսատու պայծառ լոյս,  
Աստուածային օթեան, Փրկչին կրող մաքուր կոյս,  
Պատերազմող կենացս, օգնական ու խրախոյս,  
Չար թշնամուց ազատող զէն ու ասպար Տիրուհի:

Ամեն ժամ, ամեն վայրկեան, ամեն օր, ամեն տարի,  
Միրտս, միտքս, խորհուրդս, առանց քեզ չի դադարի,  
Ամբողջ հողածիններից սուրբ, անարատ ու բարի,  
Առանց քոյ միջնորդութեան ոչ մի բան չի կատարի,  
Բանն Աստուած կատարեալ դու մարդ ծնար Տիրուհի:

Չամալիս կ'ճանաչեմ, Մայր Աստուծոյ քեզ հաստատ,  
Աստուածորդուդ բարեխօս՝ իսկ կընծայեմ քեզ հաւատ,

Նորա արեան գինն եմ ես, փոքր հօտից հարազատ,  
Թէ վարք ունենամ սիրով, ճշմարտութեան համեմատ,  
Վերջը կը լինիս օգնող ինձ մխիթար Տիրուհի:

8

Ն Ա Խ Ա Ն Ձ

**Ա**նշուշտ նախանձութիւն կուսենայ մարդը,  
Բնութիւնից պարզե՛ տուրք բնական է,  
Որը միշտ բարութիւն, որը թակարդը  
Կը լարէ ընկերին, որ անարժան է:

Բարեսէր մարդիքը նախանձը, բարին,  
Գործ կը դնեն, նախանձելով արդարին,  
Կօզնեն խեղճին, չքաւորին, տկարին,  
Այս նախանձը լաւ է, բարոյական է:

Չար նախանձը մարդուն յատուկ կը մաշէ,  
Կեանքիցը զրկելով՝ հոգին կը հաշէ,  
Չամալի, լաւ եղիր, քո հոգսդ քաշէ,  
Կը պահէ գլուխը ով գիտնական է:

9

Խ Ր Ա Խ Ո Յ Ս.

**Ա**րի հայ տղայ, համարձակ խօսակցիր, տուր պատասխան դու,  
Չէ՛ որ էիր առաջ երևելի ազգով ախօյեան դու,  
Քաջագուն հայութեան դրոշմը բարձր յարգով ընդունած,  
Չէ՛ ամօթ քեզի, որ լինիս տղէտ, ուսման մուրացկան դու:

Ծնար զարգանալով քրիստոնէութեան լուսոյ տակը,  
 Հողուոյն սրբոյ շնորքով լի մտար փառքով աւագան դու,  
 Քանի ժամանակդ կը ներէ անդադար հետեւիր միշտ,  
 Գիտութեան սրբազան պարտքդ լեցուր որ գաս երևան դու:

Լուսաւոր ազգերից օրինակ ան քեզի բաներ յարմար,  
 Քեզանից ստոր ազգերին լինիս ցոյց և տեսարան դու,  
 Զամալուս խօսքերի խորհուրդը առանց թերութեան պահես,  
 Կունենաս անկորուստ անուն այժմ և միշտ յաւիտեան դու:


10

Գ Ր Ա Մ.

**Ա**ռանց փողի աշխարհի մէջ ոչ մի բան,  
 Զի յառաջիկ, ամեն ջանքն անօգուտ է,  
 Փողով ամենայն ինչ կ'ստանայ վաղճան,  
 Թարց սորան, որքան լաւ խօսք լինի սուտ է:

Նախ ասվումէր. „գործ քոյ օրհնեն զքեզ այր“,  
 Այժմ՝ „ղրամք օրհնեն զքեզ, քաջ եղբայր“,  
 Եթէ ունիս՝ աշխարհ քուկդ է ծայրէ ծայր,  
 Իսկ թէ չունիս՝ գործդ անհիմ, խախուտ է:

„Զի անցնիր քարոզը երիցու աղքատ“,  
 Ասել են հները, ճշմարիտ— հաստատ,  
 Զամալի, հարուստը, կանթը լաւ թէ վատ,  
 Կը դնէ ուր կամի, ազատ բրուտ է:



11

ԱՆՆՄԱՆ ԾՆՈՒՆԴ.

**Ա**րեգակից փայլուն, շատ գեղեցիկ ես,  
 Սիրահարիդ համար, ընտիր սիրական,  
 Պատուական, թանկագին ակ մեղեսիկ ես,  
 Աստուածային պարգև ընծայ գովական:

Այտերդ վարդագոյն, պատկերդ լուսնակ,  
 Ունքերդ կամար է, աչքերդ կրակ,  
 Երկնից երկիր իջած, որպէս հրեշտակ,  
 Կարծեմ թէ չէ ծնուած քեզ պէս բանական:

Զամալուս հոգսերը կը փարատես հեշտ,  
 Նայուածքդ ուրախ է, խօսքերդ զաւեշտ,  
 Բնութիւնդ բարի, ազնիւ ու պարկեշտ,  
 Սիրէ քո սիրելոյդ, եղիր՝ օղնական:

12

Հ Ա Ն Ե Լ Ո Ւ Կ.

**Ա**շխարհի մէջ զարմանալի է արարած աննման,  
 Գործիք ունի, կը թռչի սա տեսակ տեսակ զանազան,  
 Կը շատանայ, ու կը աճէ, ինչպէս ամեն մարմնաւոր,  
 Բայց որդիքը կը լինին միշտ իրանից շատ ալլազան:

Սորա որդին աշխատումէ միայն ուտելու համար,  
 Ուտելովը կը մեծանայ ու կը շինէ գերեզման:

Մէկ ժամանակ գերեզմանի մէջը քնելով հանգիստ,  
էլի նորից աշխարհ կուգայ, ինչպէս որ էր բնական:

Սորա մահը մեզ յայտնի է որդին ծնելուց յետոյ,  
Սակաւ միջոց անցնելուց յետ՝ շուտով կուեննայ վաղճան,  
Ով ջամալի, այս պահուստդ կը գտնուի հեշտութեամբ,  
Ով աշխատեց բացատրել խելացի է գիտնական: \*

ԱՌՕՐԵԱՅ ԿԵԱՆՔ.

**Ա**ՌԱՍՏՈՒՆ մարդ օր քնէն վեր կելլէ,  
Մտածելով խելօք, իր գործին կերթայ,  
Քիչմ յետև շիակըվի, ինչ կենէ—կենէ,  
էտ աւուր անցուցած կեանքին կը խնդայ:

Յորեկուայ հմար է իր մտածածը,  
Թէ ինչպէս վայելէ նա պատրաստածը,  
Ուրախ, լաւ կերևայ ամեն տեսածը,  
Ըսելով կեանքը միշտ էդպէս կուեննայ:

Իրիկունն յեզվնդան յուսալով հաստատ,  
Թէ էլի կանցընէ լաւ լաւ օրեր շատ,  
Մտքովը կը շինէ գեղեցիկ պալատ,  
Էդ յուսով էլ խաղաղ քնի կը մնայ:

Ջամալի, միւս օրն էլ էդպէս է կեանքը,  
Շարունակ կը տանի ծանր աշխատանքը,  
Չի պակսի սրտիցը յոյսը, բաղձանքը,  
Մինչ օրը լրանայ, կեանքը վերջանայ:

\* Թիթեոն ու իւր թըթուրը:

Ա Ն Կ Ի Ր Թ Ը .

**Ա**յլոց տունը աւերումէ,  
Անկիրթ մարդը և իմաստակ.  
Կերպ կերպ փորձանքներ բերում է,  
Ընկերն անումէ խայտառակ:

Անունով մարդ է բանական,  
Մտքով անասունի նման,  
Մի քանի խօսք սորված բերան,  
Խօսումէ վարժ ինչպէս թուրթակ:

Չի մտածում օգուտ, վնաս,  
Չայն է տալիս որպէս կարաս,  
Ուրիշներին է պատուհաս,  
Ու ձգումէ անել վիճակ:

Ջամալս չէ անում տնազ,  
Յիմարին կըթելն է երազ,  
Հեշտ է կըթել արջ ու վարազ,  
Քան թէ մարդուն բիրտ—ստահակ:

ԻՆՔՆԱՊԱՇՏՊԱՆՈՒԹԻՒՆ

**Ա**րթ, ազնիւ հայ եղբայր,  
Քոյ յոյսդ դիր քեզ վերայ,  
Կանչէ Աստուած Տէր ու Հայր,  
Ինչ որ խնդրես քեզ կուտայ:

Պէտքէ դու միշտ աշխատիս  
Գործդ առաջ տանելու,  
Գիտցիր, ոչ ոք չի ուտեր,  
Առանց հնձել ցանելու:

Օտարներին յոյս դնես,  
Բանդ բուրդ է, իմացիր,  
Օտարը քեզ կը խաբէ,  
Գոյ գործիդ զգոյշ կացիր:

Օտարն յայնժամ քեզ կ'օգնէ,  
Երբ որ տեսնի ժիր ու քաջ,  
Պատիւ կուտայ ամեն տեղ,  
Թէ գործունեայ ես, յառանջ:

Հայր ամեն բանի մէջ,  
Աչքաբաց է ու ճարտիկ,  
Միայն անձը պաշտպանել,  
Նա չգիտէ անուշիկ:

Գու այդ մտտին մի քիչ էլ,  
Միտ դարձրու իսկական,  
Կուզես թշնամուց պրծնել,  
Զեռդ ան սուր հրացան:

Գողից ու աւազակից  
Այդպէս պէտքէ ազատուիս,  
Ոչ թէ քու վատ վիճակից,  
Միայն լսա ու դանդաւորիս

Ջամալ դու էլ չես կարող,  
Քեզանից այդ արատը

Հեռացնել, պաշտպանուիլ,  
Վերջացրու խրատը:

ՉԱՓԱԶԱՆՅՈՒԹԻՒՆ

**Ա**նասունի նման կը ստորանայ,  
Թէ մարդը չափից գուրս ունի համբերանք,  
Շատ կողմով զրկուած, գլխին վայ կուգայ,  
Ով շատ անէ ուրիշներին խղճմտանք:

Ինչո՞ւ պէտքէ վարուիլ համեստ ու խոնարհ,  
Քանի որ աշխարհը, չի սիրել արգար,  
Այնպէսները կարծվումեն հաստատ լիմար,  
Որոնք ունին ամօթանք ու սլատկառանք:

Այժմ այն հին դրութիւնը փոխուած է,  
Խեղճ մարդը հողերին հաւաստուած է,  
Փամանակի անիւր ձախ դառած է,  
Հիմա կանցնի բամբասանք ու հայհուցանք:

Ջամալի, ցաւերս քնչպէս փարատենք,  
Բոլորս այսպէս մէկ մէկի չը նախատենք,  
Բարձրներից միշտ ցածերին նկատենք,  
Միմեանց չը հաւանել, ծաղր—երգիծանք,

Ա Ր Հ Ե Ս Տ.

**Ա**րհեստաւոր դասակարգը,  
Մեր մէջ պատիւ չունի այնքան,

Չենք ճանաչում նրանց յարգը,  
Չենք զարգացել այն աստիճան:

Արհեստով ծաղկեց Եւրոպայ,  
Մեծ քայլերով առաջ կերթայ,  
Չի լինի ու երբէք չկայ,  
Առանց արհեստ վաճառական:

Մեր մէջ արհեստներն ընկած է,  
Հին կայ ինչպէս սահմանուած է,  
Տաղանտներ շատ, բայց մեռած է  
Կարօտում է ընկերութեան:

Այսպէս մնանք, ունինք կորուստ,  
Քիչ կը ճարուի մեր մէջ հարուստ,  
Հազիւ հազ կը ճարենք ապրուստ,  
Առօրեայ հացը մշտական:

Ջամալի, կացիր հաստատուն,  
Արհեստով է աշխարհ կայուն,  
Ածէ սանթուրդ զարդարուն,  
Ունիս ոսկի ապարանջան:

**Բ**նութեան հրաշալեաց ներկայացուցիչ մեղմիկ գարուն,  
Ամենայն մի եղանակից գովելի անուշիկ գարուն,  
Չմեռուան թմբած աշխարհին տալիս ես կեանք դու նոր ի նոր,  
Քեզի հետ դու բերումես միշտ հազար տեսակ ծաղիկ գարուն,

Ունի յոյս մարդկային ցեղը քեզ վերայ բիւրաւոր կերպով,  
Տխուր սրտեր կանես ուրախ—զուարթուն, գեղեցիկ գարուն,  
Անշունչ շնչաւոր արարածներին սնուցանող ես դու,  
Արարչից կարգուած գորովագութ ծնող մայրիկ գարուն:

Պարումեն ցնծալով ամբողջ զգայուն շունչ քաշողները,  
Երգով գոհանումեն թռչունները տալով ձայնիկ գարուն,  
Ջամալիս կ'լինէր ուրախ, թէ քեզ պէս մեր հայոց կեանքն էլ,  
Նորոգուէր—ստանար լուսաւորութեան արևիկ գարուն:

**Բ**նական անազնիւ ծնուած, ցած մարդուն,  
Լաւութիւն անելը կարծեմ ի գուր է,  
Օձի նման նա խայթումէ հաստատուն,  
Ով որ նորան տաքացնէ գուրգուրէ:

Անազնիւը երբոր բաց անէ բերան,  
Շուտով մէջ ընկնելով գովումէ իրան,  
Առ ու ծախս անելով ալլոց գերգաստան,  
Յոյց է տալիս, իբր խիղճը մաքուր է:

Ջամալ, անազնիւը մեր մէջ չէ դատվում,  
Ընկերութեան միջից երբէք չէ դատվում,  
Եթէ օրը քանիսին չէ անպատվում,  
Դէմքը տրտում, նորա սիրտը տխուր է:

Ս Ի Ր Ե Լ Ի Ս.

**Բ**ովից մէկ հատիկ թռել է իմ սիրուհիս պատուական,  
 Ամբողջ աշխարհը թէ փնտռես չի ճարուի նորա նման,  
 Հազար փեսայացուներ աչք ձգեցին-ցանկացան,  
 Իրար ձեռքից խլելով աշխատեցան բաւական:

Ամեն մէկն իւր կարծիքով նրա սիրտը գրաւեց,  
 Հաւատարմով թէ վերը իրան կը լինի արժան,  
 Քաղցր լեզուն, Ժպիտը միշտ խաբոււմ էր ամենին,  
 Չը հասկացան ո՞ւմ հետ էր սրտի սէրը բնական:

Շլացնել կամեցան իրանց բարձր գիրքովը,  
 Մեծ մեծ խոստում անելով հետևեցան մշտական,  
 Զամալի, նա կը հասնի իրա սրտի սիրածին,  
 Ճանաչելով հարազատ սիրահարը իսկական:

Ծ Ա Ղ Կ Ա Ն Յ Դ Ի Ր Ք Ը.

**Բ**արձրահասակ նոճու նման սիրուհիս,  
 Նաղելով, ճեմելով կանէր զբօսանք,  
 Յանկարծ մտաւ մի վարդարան, սիրուհիս,  
 Ծաղիկներ տեսնելու ունէր շատ բաղձանք:

Երփներանգ ծաղկունքը բացուած համարձակ,  
 Նուսուֆարն ու նարգոս, համեստ մանիշակ,  
 Յասմիկ, նարգիզ, յակինթ, հոտաւետ մեխակ,  
 Ու թագուհի վարդը ամենին պարծանք:

Երբ տեսան սիրելոյս սիգաճեմ, թեթեւ,  
 Սկսեցին դողալ ծաղիկ թէ տերև,  
 Ամաչելով դէմը բռնեցին բարև,  
 Զգալով իրանց մէջ ազդ ու պատկառանք:

Զամալուս սիրուհին շքեղ, բաղդաւոր,  
 Նրջումէր նրանց մէջ պատուով փառաւոր,  
 Ամենը իւր գոյնը, վարդը իւր բոսոր  
 Փոխած, միայն նորան տուին գովասանք:

Ե Ր Ե Ք Բ Ա Ն.

**Բ**նութիւնից երեք բան կալ բնատուր,  
 Որ ոչնչով ձեռք բերել չէ կարելի,  
 Երեքն էլ թէ պահուի իւր տեղը մաքուր,  
 Ամեն մարդու մօտ էլ են միշտ սիրելի:

Այս երեքի մէկն է գեղեցկութիւնը,  
 Գրաւիչ—կախարդիչ, այդ յատկութիւնը,  
 Եթէ հետը լինի պարկեշտութիւնը,  
 Այնպէս, գեղեցիկն է միշտ երանելի:

Մէկն էլ ոյժն է աստուածատուր բնական,  
 Եթէ լինի խոհեմ, պահէ ինքն իրան,  
 Բայց թշնամու դէմը կանգնի ախոյեան,  
 Այնպէս քաջն է ամենայն տեղ գովելի:

Մէկն էլ մարդուս ձայնն է քաղցր—դուրեկան,  
 Զմալլեցնող, իրան քարշող ամեն բան,  
 Զամալի, երանի քեզ տրուէր այնքան,  
 Որ երգէիր անուշ ձայնով հաճելի:

3629

Ա Մ Բ Ա Ր Տ Ա Ւ Ա Ն Ը

**Բ**արտի ծառի նման ամբարտաւան մարդ,  
 Բարձրացել ես՝ բայց անպտուղ, թնչ օգուտ,  
 Յարգդ կորցնումես, ինքնահաւան մարդ,  
 Քեզ պատել է մութ մառախուղ, թնչ օգուտ:

Անձիդ չափը չես ճանաչում, ուռել ես,  
 Սիրամարգի նման դու քեզ փքուել ես,  
 Գրսի կողմից զարգարուել ես, զուգուել ես,  
 Ոսկեզօծած դատարկ բղուղ, թնչ օգուտ:

Ջամալի, մի դատեր զուր տեղը անմեղ,  
 Սիրտդ ինչո՞ւ կսկծէ, չը կերած սղպեղ,  
 Արած գործդ չի երևում ոչ մի տեղ,  
 Չունիս ուղեղ, ունիս գլուխ, թնչ օգուտ:

Չ Մ Ե Ռ.

**Ե**րանի՛ թէ Աստուած քեզի չ'ստեղծէր  
 Հողագնդի վերայ, անիրաւ ձմեռ,  
 Բոլոր լեզուներից ջնջէր ու եղծէր,  
 Մարդկանց սարսուռ բերող, վասհամբաւ ձմեռ:

Հարուստը տունն ընկած, ինչպէս մի բանտում,  
 Միջին դասի երեսները չէ խնդում,  
 Աղքատներն էլ (օյ օյ օյ օյ) միշտ տրտում,  
 Բոլոր մարդկանց կեանքին, դու կերցաւ ձմեռ:

Ջամալիս խօսումէ քեզի դէմ կրքոտ,  
 Ծովերը ալեկոծ, սարերը բքոտ,  
 Սառեցնող—կապտացնող ձեռ ու ոտ,  
 Վայ նորան, ով չունի տաք հալաւ, ձմեռ:

ՀԵՏԵՒՈՂՈՒԹԻՒՆ.

**Ե**րկար դարեր ստրկութեան լծի տակ  
 Մնալով հայերս, այսպէս ենք դառել,  
 Չունենալով բարւոք ու ազատ վիճակ,  
 Պարսկից, թուրքից կեղծել ստել ենք առել:

Մարդկանց հետ հաւասար ապրել չենք սովոր,  
 Մեզանից բարձրի մօտ՝ քծնող—կեղծաւոր,  
 Խեղճերին դառնումենք ճնշող դատաւոր,  
 Ազնիւ արիւններս վաղուց է սառել:

Ջամալս գրումէ կողմերը տգեղ,  
 Թէև ունինք յատկութիւններ էլ շքեղ,  
 Երբ մեզ հաւատումեն մարդիքը անմեղ,  
 Մի գործ չարած, դիտենք մեծ մեծ բարբառել:

Թ Է Ճ Ն Ի Ս.

**Ե**րբ որ մտնեմ սրտի մտօք ասպարէզ,  
 Յանժամ կը տարածուի հեռուն բազուկս,  
 Թշնամիք կը սարսին թուր ու ասպարէս,  
 Շատ վերքեր կը բանայ իմ քաջ բազուկս:

Պատերազմ թէ մտնեմ սրտով մի անգամ,  
 Անշարժ կը կեցընեմ թշնամեացս անգամ,  
 Ոչ միայն գիշերը, այլ ցերեկն անգամ,  
 Կը ծագէ երկնքից նշույլ, բազուկս:

Ձեմ քաշիլ այլոց մօտ կեղծով թիւր անիս ես,  
 Կը բռնեմ անսխալ նշան թիւրախ ես,  
 Ջամալս այսպէսով հասայ թիւ ըսիս ես,  
 Շատ տեղեր տարածուեց անվախ բազուկս:

ՀԵՌԱՏԵՍՈՒԹԻՒՆ.

Չգուշանանք, լինինք մտքով հեռատես,  
 Մեր միջից դաւաճան թշնամին վանենք,  
 Ճշմարտութիւնը միշտ խօսենք սլարգերես,  
 Ինչ որ մեր բարին է, հետեւինք-անենք:

Չէ որ մենք էլ մարդ ենք հոգևով զգայուն,  
 Ինչո՞ւ մնանք այսպէս թշուառ երերուն,  
 Ամեն բան լաւ քննենք նախ խելքով հասուն,  
 «Ունքը դնելու տեղ, աչքն էլ չը հանենք»:

Ունենանք մերայնոց ճշմարիտ խնամ,  
 Հետեւինք բարութեան կեանքով յարաժամ,  
 Ջամալիս իմ ազգին եմ միշտ բարեկամ,  
 Բարոյականութեան սերմերը ցանենք:



ՀԱՆԵԼՈՒԿ.

Չարմանալի մի բան կայ աշխարհի մէջ եղական,  
 Իւր ցեղի մէջ չի ճարուի, ուրիշ ձայն սորա նման,  
 Երկու բառից է բարգուաճ սորա քաղցր անունը,  
 Մինը անշունչ առարկայ, բայց յայտնի է ձայնալիւսն:

Մինը հասարակ անուն, մեզի ամենիս ծանօթ,  
 Որին խնամում պահում է ամենայն մի տնական:  
 Երկու անուն միացած ցոյց է տալիս ուրիշ բան,  
 Մեր աշխարհում հազուագիւտ, այդ բանիցը պատուական:

Գոյնը սպիտակ մաքուր, որպէս ձիւնը աչք առնող,  
 Գլխի վերայ զէնք ունի, բարկութեանը իսկ նշան,  
 Ճանապարհորդք պատմումեն, ձայնիցը զարմանալով,  
 Ասումեն տարածվումէ թնդանօթի աստիճան:

Ջամալի, այս պահուստդ երգիչների համար է,  
 Թէ միտքը չը հասկացան, դժուարին է բաւական\*:

ԽՆԴԻՐ ԶԵՓԻՒԹԻՒՆ.

Չեփիւռ, անուշ հնչէ մեղմիկ,  
 Տար սիրելոյս զովացուր,

\* Ջանգալահաւ-թռչուն Ամերիկայում ու  
 Անգլիայում գտնուող:



Սիրատոջոր, այրուող, մնջիկ,  
Օրս նրան հասկացուր:

Յուշիկ յուշիկ փափսալով,  
Իւր ականջին հասցրու,  
Գունդունալով-նուաղելով,  
Երգս նրան երգէ դու:

Ասա՛, թնչպէս նորա համար,  
Գիշեր ցերեկ առանց քուն,  
Աղօթումեմ միշտ անդադար,  
Որ նա լինի զուարթուն:

Մի ժամանակ թագուհու պէս,  
Զարգարվումէր պճնվում,  
Ինձ հետ մէկ տեղ ելած հանդէս,  
Կուրախանար անպատում:

Ընկերների մէջը երբէք,  
Իւր նմանը չէր ճարուի,  
Անահիտը՝ չունէր արժէք,  
Աստղիկը չէր յարմարուի:

Իմ սրտիցը նրա սէրը  
Զի հեռանալ բնաւին,  
Աչքիս առջևն է պատկերը,  
Ինչպէս լրացած լուսին:

Արդեօք պիտի լինի մի օր,  
Կրկին նրան ես տեսնեմ,  
Թէ ոչ այսպէս, կեանքս բոլոր,  
Կարօտովը անցընեմ:

Այսօր միայն հեռուից կառնեմ,  
Իմ սիրելոյս համբաւը,  
Բայց չը կարծէ թէ ես սառն եմ,  
Ցանկանումեմ միշտ լաւը:

Թռիւր, զեփիւռ, շուտով հասիր.  
Գու իմ սրտի անձկալույն,  
Երգս այնտեղ շուտ շուտ կրկնէ,  
Յիշեցրու Ջամալուն:

30

ՍՈՒՏ ԱԶԳԱՍԷՐՆԵՐ

**Ճ**ամանակիս մարդկանց մէջը շատացան,  
Սուտ ազգասէր-խաբեբաներ անհամար,  
Անկիւններից անգործ մարդիք դուրս պրծան,  
Գուփումեն միամիտ մարդկերանց լիմար:

Տաք ու պաղ փչումեն այլոց մօտ ցանցառ,  
Ազգ սիրելը բերաններում տուր և առ,  
Ամենը մի սուտ բան բռնելով պատճառ,  
Մուրցնող անմեղ մարդոցը արգար:

Զգուշանալ պէտքէ կեղծաւորներից,  
Զրիակերութիւն միշտ սովորներից,  
Զի որոշուիլ լաւը, ցած ստորներից,  
Որովհետև ճանաչելն է շատ դժուար:

Ջամալի, այդպիսի մարդիք խիղճ չունին,  
Միշտ գործումեն խաւարներում առանձին,  
Վերջ ու առաջ պատիժ կստանան բաժին,  
Աստուածախար ու մարդախարն է հաւսար:

Ս Ո Ւ Ա Կ Ի Ն.

**Ի**գուր է, մի երգիլ, իմ քաղցրիկ սոխակ,  
 Անցաւ քո երգելու լաւ ժամանակը,  
 Բարձրացաւ ագռաւի վայն ու աղաղակ,  
 Ել սիւ է լսողը քո եղանակը:

Քոյ ձայնին կ'ափսոսայ զգայուն մարդը,  
 Ո՛ւր է քո սիրելին, պարտեղի զարդը,  
 Այն ծաղկանց թագուհի, հոտաւէտ վարդը,  
 Թառամեց, հնացաւ քո նպատակը:

Ջամալի, սոխակի կեանքը ձախորդեց,  
 Ջուարթ լաւ օրերուն տօթը յաջորդեց,  
 Այն քաղցր երգելու տեղը հաղորդեց,  
 Իւր անախորժ ճիչը, վատ կաջաղակը:

Ի Մ Կ Ե Ա Ն Ք Ը.

**Ի**նչո՞ւ այլոց մօտը ուրախ կերևիս,  
 Տրամութիւնը, անձս, արժան է քեզի,  
 Շատից իբրև մի բարի մարդ կը սիրուիս,  
 Բայց պակաս կողմերդ խթան է քեզի:

Ջանս, որ չընդունես վատ ընկերները,  
 Սիրտ քաշող-դրասող կեղծ նուէրները,  
 Մոլի մարդկանց խրատն ու պատուէրները,  
 Չը կարծես թէ սիրոյ նշան է քեզի:

Ջամալի, մտածէ դու միշտ բարիքդ,  
 Ջղջ՞ ու մոռացիր անցած չարիքդ,  
 Հետզհետէ կը գլորուին տարիքդ,  
 Գիտցիր, որ աշխարհը խոսկան է քեզի:

Լ Ա Ի Ը Ն Կ Ե Ր Ը

**Լ**աւ ընկերը մարդուն կանէ պարզերես,  
 Լաւ ուղղութիւն կ'տայ միշտ լաւ շրջանը,  
 Եթէ մարդը լինի խնայող տնտես,  
 Ել դժուար չի լինի ապագայ բանը:

Մարդը յայտնվում է երեսի գունով,  
 Նա և հասկացվում է ոտից քայլերով.  
 Լաւը ճանաչվում է իրա ընկերով,  
 Եւ ըստ այնմ ստանում իւր արժանը:

Ջամալի, այսպիսով կապը մարդկութեան,  
 Ամրանում է սիրով, յուսով ամեն բան,  
 Լաւ ընկերից չի կշտացուիլ լաւիտեան,  
 Այսպէս է բարձրանում մարդ բանականը:

Հ Ա Յ Ա Ղ Ջ Ի Կ

**Կ**ամարաձև ու սևագոյն ունքերդ,  
 Կընծայէ հայ սրտին աշխույժ, հայ աղջիկ,  
 Վառվառն այտերով, սիրուն պատկերդ,  
 Հոգեհան աչքերով, մեղույ՜ Հայ աղջիկ:

Գեղեցկութեամբ սիրամարգից շատ վսեմ,  
 Արծիւից հեռատես, տատրակից խոհեմ,  
 Գրախտահաւից կաքաւից սիգաճեմ,  
 Նազանի ես և փաղաքուշ, հայ աղջիկ:

Չամալիս քեզանից այսքան է խնդրում,  
 Հայուհի, հայութեան ունեցիր միտում,  
 Հայ հողուով գորացիր, ստացիր ուսում,  
 Չը լինիս օտարին շամբուշ, հայ աղջիկ:

35

Ք Լ Ա Տ Ը.

Կան մարդիք՝ ապրելու լաւ միջոց ունին,  
 Բայց ապրում են իբրև աղքատ չքաւոր,  
 Կեանքը անցաւոր է, այդքան խելք չունին,  
 Միշտ փող դիզել ու չուտելու են սովոր:

Աշխարհ եկան, ինչու համար, չեն զիտում  
 Գիշեր ցերեկ տանջւում են, չեն զգում,  
 Աննպատակ աշխատում են ու դիզում,  
 Ուրիշները վայելում են փառաւոր:

Կան մարդիք էլ հաց են ճարում օրական,  
 Բայց ապրում են մարդի նման պատուական,  
 Կարեաց չափով ուրիշներին օգնական,  
 Խղճով մաքուր, սրտով ուրախ, բաղբաւոր:

Չամալիս ասում է ինչ որ արժան է,  
 Երջանիկ է՝ ով բաղդից բաւական է,  
 Սև հողը ամենքին հաւասար կանէ,  
 Չի հարցանում աղքատ, հարուստ, թագաւոր:

36

ԿԱՍԿԱԾ ՈՏՆԵՐԸ.

Կասկածոտ մարդու կարծիքը,  
 Շատ անգամ սխալ դուրս կուգայ,  
 Խօսիս՝ ճշմարիտ բարիքը,  
 Գարձեալ ուրիշ կարծեաց կերթայ:

Կարծիք կանէ ինքն իրանից,  
 Ճիշտ խօսք չի դուրս գալ բերանից,  
 Ընկերներից, մինչ իւր տանից,  
 Վնաս կ'սպասէ ակամայ:

Մշտական տխուր կը տեսնես,  
 Բարի խորհուրդ դու չ'սպասես,  
 Աշխարհի հարկերը կասես,  
 Ծանրացել է իրան վերայ:

Կեանքն է նորա համար տանջանք,  
 Ամեն քալափոխ կասկածանք,  
 Թէ յանկարծ պատահի փորձանք,  
 Ամենին թշնամի կ'զգայ:

Մշտապէս սրտի մէջ ահը,  
 Չի ճանաչիլ վնաս շահը,  
 Չամալ, կասկածոտի մահը,  
 Շուտ կը հասնի չի-ուշանայ:



ԽՈՂՆԵՄՈՒԹԻՒՆ.

**Հ**այեր իրար սիրենք ու խաղաղ լինինք,  
 Ուրիշ ազգեր ինչո՞ւ հակառակ տեսնեն,  
 Իրար համար զոհուինք ու մատաղ լինինք,  
 Մեզի սիրով, ուրախ, աջողակ տեսնեն:

Վատուժիւն սիրողն է անասուն անբան,  
 Մեր հայ ազգին, խոհեմութիւնն է արժան,  
 Այնպէս ընթացք բռնեն, չ'ծաղրեն-խնդան,  
 Իրարու սիրական՝ շարունակ տեսնեն:

Ջամալիս կը խօսիմ մեր ազգին յարմար,  
 Խաղաղութիւն սիրենք կեանքի օգտակար,  
 Օտարք չը կարծեն մեզ անխելք ու լիմար,  
 Ամեն տեղ պարզերես, համարձակ տեսնեն:

**Հ**այ մարդ մի՛ կորցնէր նախնեացդ ոգին,  
 Այն է՝ սուրբ կրօնիդ պահպանութիւնը,  
 Միմիայն այդ մնաց աշխարհիս միջին,  
 Պարծանք՝ մեր հոգևոր իշխանութիւնը:

Բայց դու պարտաւոր ես աչքերդ բանալ,  
 Նախապաշարմունքներն հերքելու ջանալ,  
 Հոգևորաց լաւերի հետ միանալ,  
 Վայելել աշխարհի երանութիւնը:

Ջամալուս պէս եղիր դու պարզակրօն,  
 Կատարէ ազգիդ հետ ամեն ծէս ու տօն,  
 Մի՛ խղեր միութեան կապը, լեր զգօն,  
 Կորուստ կը պատճառէ բաժանութիւնը:

**Հ**նչեցո՛ւր քաղցրաձայն նուազարանդ,  
 Ով իմ հոգեհատար յարգոյ երաժիշտ,  
 Շատ թանկ է մեզ համար քո մի վայրկեանդ,  
 Քեզնով է փարատվում ամեն ցաւ ու վիշտ:

Սպասումենք քեզի, նայելով ակճիւ,  
 Թէ արդեօք լարերիդ երբ կ'տաս կշիւ,  
 Բերկրելով ամեն սիրտ, կ'ստանայ զրգիւ,  
 Քեզնով փափկանումէ սիրտը ամբարիշտ:

Դու ես պատերազմի զրգիչ-մակարդը,  
 Ուրախութեան ու տրամութեան նուրբ զարդը,  
 Ջամալիս գովումէ երգ սիրող մարդը.  
 Շիլլերից առնելով «երգը կեանք է միշտ»:

**Հ**այ եղբայր ուսուցիչ դու մի՛ խնայիր,  
 Ինչ ուսում առել ես, քու ազգիդ խղճուկ,  
 Գիտութեանդ լոյսը սրտով ընծայիր,  
 Արծարծէ մանկական սրտերում փափուկ:

Նայելով փրկութեան վեհ աստիճանից,  
Ամեն մի բան սպասվումէ քեզանից,  
«Ում շատ տրուաւ շատ պահանջուի նորանից»,  
Կատարիր փրջական այս խօսքը յատուկ:

Յարգո՛ղ չը գիտնալը մի բերիլ պատճառ,  
Ջամալիս յուսով է, չես մնայ թշուառ,  
Ապագային արածներդ շատ պայծառ  
Կերևի փայլելով, չի մնայ ծածուկ:

ՄԱՐԿԱՆՑ ԴԻՐՔԸ

Համայն աշխարհի մարդիքը իրանց եսն ու պատիւ ունին, 1,  
Նաև գոյութիւն պահելու համար վեճ ու կռիւ ունին, 2,  
Այնպիսիքը բաղդաւոր են, որոնք պաշտպան հովիւ ունին,  
Կայրին իբրև մարդ կատարեալ, մարդկութեան մէջ հաշիւ ունին  
Բայց կան շատերը անպաշտպան իրանց ցաքուցրիւ ունին  
Ու երջանիկ կեանքի մէջ չեն, իսկ ցաւերը անթիւ ունին:

Մարդը ծնուել է Արարչի պարգևածը վայելելու,  
Աստուածային հրամանով ճակտի քրտամբ աշխատելու,  
Շատերը կան սովորել են ուրիշի հաշուով ապրելու,  
Բռնի ոյժ կամ խարդախութիւն և կամ զրկանք գործ դնելու:

Մէկը ազնիւ ճանապարհով հազիւ կարող է հայ ճարել,  
Իրա տուներ-գերդաստանը մարդավայել կառավարել,

1—2 Այս սուղերը կրկնել ամենայն տանց վերջում:

Միւսն ստոր միջոցներով հարուստ մեծատուն է դառել,  
Հագարաւոր մարդկանց կապել կաշկանդել է գերի արել:

Ջամալի, Աստուծոյ մօտը բոլոր մարդիք հաւասար են,  
Ազատ ստեղծեց ամենքին իրանք իրանց ղեկավարեն,  
Ոչ թէ ուժովը անուժին զրկեն, գոփեն ու աւարեն,  
Յետոյ օրէնքի անունով ցոյց տան իբր թէ արդար են:

ԱՌ ՍԻՐԵԼԻՍ.

Հողի ջան, քո պատկերդ արև լուսնեակ է ինձ համար,  
Այդ սիրուն թուխ աչքերդ փայլուն սև ակ է ինձ համար,  
Մեղրակաթ շրթունքներդ քաղցր ճաշակ է ինձ համար,  
Այտերդ վարդակարմիր իսկ վառ կրակ է ինձ համար,  
Ճակատդ լայն ասպարէզ, պայծառ փայլակ է ինձ համար:

Աշխարհում չ'կայ քեզ պէս ինձի համար մեկ գեղեցիկ,  
Իմ կեանքս սիրոյդ համար ընծայումեմ քեզի քաղցրիկ,  
Հասակդ երկար սիրուն, լեզուդ համեղ է անուշիկ,  
Թուչունները քեզանից թող զան սովորեն դալլալիկ,  
Քոյ միայն տնանալդ իբրև սոխակ է ինձ համար:

Քեզ համար ես կը զոհեմ իմ ունեցած կայքը յետին,  
Ա՛խ, սիրաս զբաւել է սևագոյն մագերդ անգին,  
Ձի պողիլ սիրաս քեզնից, ահա քեզի վկայ երկին,  
Եթէ ես չ'վայելեմ քեզի հետ վիճակ միասին,  
Իմացիբ որ աշխարհը իսկ աւերակ է ինձ համար:

Ջամալուս գովասանքը սակաւ է դեռ, ունիս շատը,  
Խօսեցայ ինչ արժանն էր ես իմ կարեաց համեմատը,

Քեզ ասեմ, իմ սիրելի, վերջ նպատակիս հաստատը,  
Մահանալ, ինչպէս եղաւ, Շիրինի սիրոյն Փարհատը\*  
Ըստորում լոյսը առանց քեզ խաւարակ է ինձ համար:

ԱՇԸԳ ՇԻՐԻՆԻ ԵՐԳԻ ԹԱՐԳՄԱՆՈՒԹԻՒՆԸ ԲԱՌ ԱՌ ԲԱՌ.

**Հ**ինգ աւուր աշխարհի կեանքդ,  
Ի՞նչ է որ, մարդ, վստահ լինիս,  
Կը կորչի անուճդ, ջանքդ,  
Եթէ անխելք անահ լինիս:

Հեռացիր սուտ խօսողներից,  
Երեսիդ խնդացողներից,  
Միշտ հարցրու գիտուններից,  
Ամեն բանից ահահ 1. լինիս:

Հիմ մի ձգեր գետի մէջը,  
Մի կապուիր վատ ցետի 2. մէջը,  
Սյնպէս վարուիր ճետի 3. մէջը,  
Բարի համբաւ երահ 4. լինիս:

Խոնարհ սրտին սէր շատ կլնի,  
Վերջին լոյսը հաստատ կլնի,  
Ջամալ, բաղդդ առատ կլնի,  
Որքան առատ ու շահ լինիս:

\* Շիրինը ու Փարհատը սպարսից բանաստեղծութեանց մէջ յայտնի սիրահարներ են:

1, տեղեակ. 2, թելի հենք-հինուածք. 3, աղգ. 4, ուղիւղ:

Հ Ա Ն Ե Լ Ո Ւ Կ.

**Մ**ի բան գիտեմ նշանաւոր, չունի ձե ու կերպարան,  
Առանց հոգի, առանց մարմին, ման կուգայ անշունչ, անբան,  
Ոչ թռչուն է, ոչ անասուն, չունի ոտներ, չունի գոյն,  
Բայց գալիս է ժամանակին նա մեզի հիւր պատուական:

Ունի տասը իրան ընկեր անուանակից հաստատուն,  
Տասնըմէկը՝ ինքն է մեծը, գլխաւոր ու աննման,  
Երբ նա կուգայ կը մօտենայ, կը շփոթուին մարդիքը,  
Բայց մէկ մասը իրանց զիրքից դուրս գործ կանեն անարժան:

Իսկ աշխարհում շատ մարդիք կան գոյութիւնն էլ չեն գիտում,  
Չեն մասնակից նորա բերած, ուրախութեան, տրամութեան,  
Երեք բառից բարդուած է, այս պահուստդ Ջամալի,  
Երեխաներն անգամ գիտեն, ոչ թէ մեծ կամ գիտնական:\*

Ե Ր Կ Ո Ւ Ա Ղ Ջ Ի Կ.

**Մ**էկ ման գալու տեղում երկու հայ աղջիկ,  
Հանդիպեցին միմեանց դէմ առ դէմ ներհակ,  
Մինը երկար, սիրուն, տեսքը գեղեցիկ,  
Իսկ միւսը, տգեղ էր ու կարճահասակ:

Տգեղը հարուստ էր, զարգարուած ազատ,  
Հագուստը փառաւոր, վիզը ոսկի շատ,

\* Բուն-Բարեկեցիկանը:

Բայց սիրունը խեղճ էր, չքաւոր աղքատ,  
Նորա մօտ ծաղրելի, խղճուկ-նշաւակ:

Սակայն խեղճ ասածս, էր բարքով պարկեշտ,  
Գլուխը խոնարհեց ու բարեկեց հեշտ,  
Ուզեց որ գրաւէ խօսքերով զաւեշտ,  
Կամ խօսելով մի երկու հատ առակ:

Ասաց, քոյրիկ, ասանքն է անունդ,  
Ինձի չափ տասնըհինգ կլնի արբունդ,  
Վերայիդ պէս ճոխ է քոյ կայքդ, տունդ,  
Թէ ինձ Մագթաղիս պէս անտուն-անբնակ:

Իմացայ անունդ, Մագթաղ, հաճոյ է,  
Իմ անունս էլ ասեմ քեզի, Սօֆօ է,  
Սօֆօն ունեցածից բաւական գոհ է,  
Ունիմ մի իշխան հայր, հարուստ, համարձակ:

Ասաց Սօֆօ, քեզ հետ խօսել չէ պատկան,  
Ըստորում դու փարթամ, ես եմ աննշան,  
Բայց հասկացիր, հոգիքս է մէկ-անբաժան,  
Խօսիր ինձ հետ, մի սպաներ անգանակ:

Սօֆօն ասաց, ինձ հետ դու մի լինիր մին,  
Ձէի խօսիլ քեզ հետ, չ'լնէր առանձին,  
Ձէս տեսներ, ես ունիմ զարդեր թանկագին,  
Յաւերթահարսներին ես եմ նմանակ:

Մագթաղն ասաց, տեսանք, ունիս լաւ ապրուստ,  
Գոյնզգոյն-պատուական կերպասեայ հագուստ,  
Շարիշար մարգարիտ, գոհարներ ու բոլստ,  
Հանդերձներդ մաքուր, փայլուն, սպիտակ:

Սօֆօն ասաց, քոյրիկ տեսածդ թնչ է որ,  
Տանը ունիմ պահած այսպէս տասնաւոր,  
Տասը ձեռք օժիտս պատրաստ է բոլոր,  
Մօտ օրերս պէտքէ դնեն նշանակ:

Այլ քաշեց Մագթաղը ու դունահատեց,  
Իրան կոյր բաղդիցը սրտով զանգատեց,  
Ծնած օրը մտքով անիծեց-ատեց,  
Աչքերից գլորեց մի երկու կայլակ:

Մեղայ գոչեց շուտով, մեղայ Տէր, հաստատ,  
Տուր ինձ կարողութիւն չ'լնիմ յուսահատ:  
Պահպանեմ անունս մաքուր-անարատ,  
Մնտի բաներու չունենամ փափագ:

Սօֆօն ասաց, ինչո՞ւ տրտմեցիր հիմալ,  
Ինչ որ կամիս, ասանք, քեզ կ'տամ ընծայ,  
Խօսիր ինձ հետ, զուարճացիր ու ցնծանք,  
Քեզ էլ կառնի մի մարդ, կ'գայ ժամանակ:

Մագթաղը այդ բանին չունէր տարակոյս,  
Ամուսին դառնալու ունէր վերջը յոյս,  
Նրա խօսքերից էլ առաւ խրախոյս,  
Նոր էլի սկսեց ծաղր ու ծանակ:

Ասաց Սօֆօ, քեզ թնչպէս մի տղայի,  
Արժան կ'համարես դու հարս փեսայի,  
Մի կատարեալ ու զարգացած լաւ հայի,  
Կամ թէ լինի հարուստ ու տղէտ համբակ:

Սօֆօն ասաց, էս, իմ քոյրիկ պատուական,  
Կուզեմ առնի ինձի մէկ վաճառական,

Ունենայ շատ ապրանք ու գանձ բաւական,  
Ուտենք, խմենք, առատ, անչափ, անքանակ:

Մագթաղն ասաց, քոյրիկ, զիտցիր չեմ մոլոր,  
Կուզեմ առնի ինձի մէկ արհեստաւոր,  
Թող ունենայ շնորհք, չ'լնի փառաւոր,  
Անխնայ ինձ բերէ բաժին նկանակ:

Ասացին մէկ մէկու, խօսանք բաւական,  
Այսուհետև մեզի գնալն է արժան,  
Զմոռանանք միմեանց մինչև գերեզման,  
Մեր խօսած խօսքերը մնան լիշատակ:

Այսքան բանից լետոյ, Մագթաղ, Սօֆիան,  
Համբուրեցին իրար, թողին հեռացան,  
Ամենքն իրան ուզած բաղձանքին հասան,  
Ունեցան հարսանիք, ունեցան պսակ:

Բայց տեսէք խաբեբայ աշխարհի բանը,  
Միշտ կը փոխուի մարդու բաղձի շրջանը,  
Շատ մարդ կը կորցնէ իւր աստիճանը,  
Շատ ամուսինք կ'լնին իրար հակառակ,

Մեռան Սօֆիայի հայրն ու մայրը:  
Կայքերը փչացան, հասաւ վերջ ծայրը,  
Մնանկացաւ հարուստ ու շուտ ալ տիրը,  
Ամեն բան փչացուց, ընկաւ պարտքի տակ:

Այնուհետև խեղճ Սօֆիան միշտ տրտում,  
Թշուառ օրերու մէջ չունէր կեր ու խում,  
Շատ օր կանցկացնէր անսուաղ ու ծում,  
Լալով-սգով անում էր նա աղաղակ:

Հիմա գանք նկատենք Մագթաղի կեանքը,  
Տեղը հասաւ նրա փափագը ջանքը,  
Ամեն բանով լցուաւ սէրը-բաղձանքը,  
Ունեցաւ լաւ ապրուստ ու բարի վիճակ:

Սորա մարդը արհեստաւոր էր բարի,  
Խելացի, կատարեալ, քաջառողջ, արի,  
Կը վագէր միշտ ամեն գործի, հնարի,  
Քրտինքով կ'ստանար նա արդար վաստակ:

Ջամալի երգիչս առնելով խրատ,  
Գիտեմ անցաւոր է ամեն բան լաւ վատ,  
Խնդրումեմ Արարչից սէր, յոյս ու հաւատ,  
Աշխարհիս փառքերն են չնչին հասարակ:

ՍԷՐ ԲԱՐՈՅԱԿԱՆ.

**Մ**արդս պարտական է աստուածասիրութեան,  
Նուիրել իւր կեանքը բոլոր, անվրդով,  
Երկրորդ՝ պարտական է ընկերսիրութեան.  
Սրանից կախուած են օրէնքներ յօլով:

Նախ՝ ընկերն է մարդու իւր գերդաստանը,  
Յետոյ արենակից ազգ սիրականը,  
Հուսկ յետոյ մարդկեղէն ողջ բանականը,  
Սիրել պէտքէ ամեն մէկին իւր չափով:

Ջամալի, պարտք գրեց երկնային Տէրը,  
Այս էր Քրիստոսի անսուտ պատուէրը,  
Ում մէջ գտնվումէ այս երկու սէրը,  
Կը լինի սրանցով մարդը անխուով:



ԱՆՅԵԱԼ ԿԵԱՆԻՅՑ.

**Մ**եր նախնիքը ունէին, շատ,  
 Փառք ու պարծանք, պատիւ, հայեր,  
 Էին բարքով իսկ պայազատ.  
 Բնութիւնով ազնիւ, հայեր:

Ունէին սիրտ վեհ, հաստատուն.  
 Եւ հռչակուած բարի անուն,  
 Ձէր պակաս հայերից գիտուն,  
 Ու շատ արի հովիւ, հայեր:

Կար Արամ, Արտաշէս, Տիգրան,  
 Վահագն, Արշակ և Գալլ-Վահան,  
 Նախ Վաղարշակ, յետոյ Վարդան,  
 Համբաւեցան անթիւ, հայեր:

Ջամալիս, ո՞ր մէկը ասեմ,  
 Հայ քաջերի ո՞րը դասեմ,  
 Գիտութեան մէջ շատ պակաս եմ,  
 Ձեմ կարող տալ հաշիւ, հայեր:

ՎԵՐՋԸ ՄՏԱԾԵԼ.

**Մ**արդու լաւը այն կը կոչուի որ մտածէ վաղճանը,  
 Ո՛չ թէ միայն անգիտութեամբ հողայ այսօրուայ բանը,  
 Արարիչը կամեցել է մինչ անգամ մըջիւններին,  
 Մտածել ու պահել պաշար բաւականին ձմռանը:

Ահա մեզի մէկ օրինակ, որ կերևի պարզապէս.  
 Հողագործը սերմ ցանելով, կ'սպասէ նոր աշնանը,  
 Ինչո՞ւ համար չի ուտել նա պատրաստածը ծուլութեամբ,  
 Որովհետև կը սպառի շուտ անաճիլ այնքանը:

Բայց մեզանից շատ շատերը հնութիւնով մոլորուած,  
 Ձենք հասկանայ բնութեան կարգով կատարած սահմանը,  
 Ինչպէս Ռուսաց հին առածը կասէ թէ՛ «մինչ երկինքը  
 Չը որոտայ, չի խաչկնքել երեսը շինականը»:

Ով Ջամալի, մոլիները մինչ ամեն բան չը վատենն,  
 Ձեն աշխատիր, մինչ չերևի սովածութեան նշանը:

ՀԱՒԱՍՍՐՈՒԹԻՒՆ.

**Մ**եր վեհ Կայսեր համար ամեն հպատակ,  
 Հաւասար է, իբրև որդի հարազատ,  
 Յանկացող է ամեն մէկին լաւ վիճակ,  
 Կամենումէ որ միշտ լինինք մենք ազատ:

Ընդհանուր զարգացման միջոց տուել է,  
 Կրօն, ազգայնութիւն, ճանչել յարգել է,  
 Մարդավայել ապրիլ մեզ շնորհել է  
 Օրէնքները մեզ առաջնորդ ու խրատ:

Ջամալի դու եղիր միշտ հաւատարիմ,  
 Պետութեան թշնամեաց կանգնիր ոխերիմ,  
 Եղել ես ու եղիր սրտով մտերիմ,  
 Հայրենեացդ ժառանգ հողով անարատ:

ՄԱՐԴԱՍԻՐՈՒԹԻՒՆ.

**Մ**արդու պարտքն է սիրել իրայ նմանին,  
 Օգնել գործով նեղացածին, ընկածին,  
 Հաստատ մնալ սրտի, խղճի պայմանին,  
 Հետևելով Սուրբ գրքերի գրուածին:

Ս.մեն մի մարդ, ինչքան տանի կարիքը,  
 Պէտքէ անէ ձեռքից եկած բարիքը,  
 Չը մոռանայ իւր ազգը, հայրենիքը,  
 Ս.մեն կերպով օգնելու է ճնշուածին:

Չարակամ մարդիքը միշտ գիտեն խնդալ,  
 Այլոց նեղութիւնը տեսնել՝ չը գթալ,  
 Ջամալի, քիչերը կարող են զգալ,  
 Գառնութիւնը իսկ հարստահարուածին:

ԽԵՂՅ ՀՈՎԻԻԸ.

**Մ**ի խաշնարած համեստ հովիւ հառաչելով ման կուգար,  
 Ա՛խ քաշելով, արտասուելով, այս կողմ այն կողմ ձայն կուտար,  
 Ատուած սիրող, չ՛կհայ մէկը, գառնուկներս տեսանող,  
 Ոչխարներս մնացել են բառաչելով անդադար:

Գու մի ասիլ անմեղ հովուի գառները գալլ չէ տարել,  
 Փուչ աղուէսն է խրտնեցրել ու ձգել է սար ու քար  
 Խղճուկ հովուի ոտքերն արիւն, ամբողջ մարմնով քրտնաթոր,  
 Վերջ ի վերջոյ թէև գտաւ պարտելով շատ երկար:

ՈՒՍՈՒՄՆ.

**Մ**արդը ուսմամբ կը զարգանայ,  
 Կը լինի ազնիւ գեղեցիկ,  
 Մտածելով միշտ ապագայ,  
 Կուսննայ օրեր երջանիկ:

Մարդուն պատկան է ուսումը,  
 Միշտ գովական է ուսումը,  
 Շատ քաղցր բան է ուսումը,  
 Չկայ այսպէս բան անուշիկ:

Մարդուն մարդ կ՛շինէ ջանքը,  
 Նա մանաւանդ հրահանգը,  
 Նա է մարդկութեան ժառանգը,  
 Ով որ չի մնայ գուհիկ:

Ուսեալ մարդու գործը այլ է,  
 Գործի մէջ ուղիղ կը քայլէ,  
 Ս.մեն տեղ մաքուր կը փայլէ,  
 Ինչպէս դաշտի շուշան ծաղիկ:

Ջամալի, ժողովուրդի մէջ,  
 Կեանքդ կանցնի խառնուրդի մէջ,  
 Ս.մեն բարձր խորհուրդի մէջ,  
 Գիտուն մարդըն է անդրանիկ:

ԾՈՅԼՆ ՈՒ ԱՇԽԱՍՍՍԵՐԸ.

**Մ**էկ քաղաքից երկու նորահաս հայ տղայ,  
Յանկացան որ զնան մի երկիր օտար,  
Գնանք աշխատութեան, մինչ լինինք ծառայ,  
Այսպիսի խորհրդով ընկան ճանապարհ:

Երկուսն էլ ունէին ծնողներ աղքատ,  
Նախածանօթ էին, դրացի հաստատ,  
Իրար հետ մեծացած սրանք հարազատ,  
Բայց մէկը խելօք էր, իսկ միւսը լիմար:

Խելօքի անունն էր, իւր յարմար Գառնիկ,  
Տգէտի անունն էլ դրուած էր Թառնիկ,  
Ասացին մէկ մէկու «խօսքից գեղեցիկ  
Չը դուրս գանք, որ գործով չը լինինք շուար»:

Գնացին ու հասան մէկ քաղաք հեռու,  
Գառնիկն ասաց, եղբայր, ինձի լսէ դու,  
Բարի պայմաններու հնազանդ հլու  
Եղի՛ր, որ անունդ չը լինի վատթար:

Թառնիկն ասաց, եղբայր, ես արգելք չունիմ,  
Չը կարծես թէ ես քեզի չափ խելք չունիմ.  
Մի՛թէ մոլորուած եմ, կամ թէ ելք չունիմ,  
Ես գիտեմ շատ գործեր, նա և շատ հնար:

Գառնիկն ասաց, հոգեակ, այգպէս մի ասեր,  
Գու մեզ գիտուններու դասը մի դասեր,  
Բան հնարող աստիճանի չենք հասեր,  
Չունինք մենք փող կամ կայք և չունինք հանճար:

Թառնիկն ասաց, պէտքէ քեզնից զատուիմ ես,  
Գոյ լիմար խօսքերից մէկ ազատուիմ ես,  
Տես քնչ աջող գործի մէջ հաստատուիմ ես,  
Չես գիտեր որ ես եմ լեզուանի ճարտար:

Գառնիկն ասաց, շատ լաւ կլնի, խաչ,  
Ես չեմ ուզեր որ դու ինձնից լինիս քաջ,  
Ամեն գործով խելօք վստահ ու առաջ,  
Չարես քեզի համար մի համեստ գումար:

Հեռացան իրարուց, կապելով պայման,  
Որ աշխատին գոնէ միմեանցից բաժան,  
Ունէին նպատակ անդ կենալ այնքան,  
Մինչև որ հաւաքեն բաւական ծրար:

Գառնիկը իշխանի մօտ եղաւ ծառայ,  
Եղաւ հաւատարիմ, ստացաւ ընծայ,  
Կանգնեցուց իւր բոլոր գործերի վերայ,  
Իշխանը պատուիրեց միշտ լինել արդար:

Թառնիկը բնութեամբ հպարտ էր ու ծուլ,  
Չ'կար մէջը բնաւ գիտութեան նշուլ,  
Թէ գործ էլ պատահէր կը բռնէր շատ թուլ,  
Կը պտըտէր պարապ գծուծ ու մուլար:

Գառնիկը պաշտօնի մէջը եղաւ լաւ,  
Հանեց այդ քաղաքում կատարեալ համբաւ,  
Ընկերին էլ թէև նա կ'օգնէր, իրաւ,  
Բայց չէր կարող նորան պահպանել երկար:

Թառնիկը ծուլութեամբ ընկաւ ստոր-ցած,  
Ոտները բոբիկ էր, վերան մերկ ու բաց,

Անխնայ չէր կարող ճարել ցամաք հաց,  
Գոնէ պահպանութիւն իւր անձի համար:

Գառնիկը աշխատեց բաւական դրամ,  
Իշխանին մտերիմ եղաւ յարաժամ,  
Ուզեցաւ հայրենիք դառնալ ինքնակամ,  
Սիրելի իշխանին համոզեց դժուար:

Գառնիկը Թոռնիկին յետ դարձուց հետը,  
Հանեց նորա սրտում ցցուած սուր նետը,  
Թող նորան պաշտպանէ Արարչապետը,  
Չը մատնէ թշնամեաց ձեռքը անարդար:

Գնացին էլի յետ երկիր հայրենիք,  
Գտան ծնողներին ողջ ու ծերունիք,  
Գառնիկն ամուսնացաւ, արաւ հարսանիք,  
Վայելեց այնուհետ աշխարհը դադար:

Թոռնիկը աշխարհում եղաւ սգալի,  
Անցուց իւր օրերը խեղճ ու խղճալի,  
Մէկ օր չունեցաւ կեանք իսկ ուրախալի,  
Այսքան խեղճութիւնը կը տանէր անձար:

Ահա ես գրեցի երկուսի կեանքը,  
Թոռնիկը ծուլութիւն, Գառնիկի ջանքը,  
Այսքան քաղցր-անուշ է աշխատանքը,  
Եինեց Գառնիկին մարդ՝ մարդկութեան յարմար:

Ջամալի, հետեիր լաւ օրինակին,  
Արժանանաս Գառնիկի լիշատակին,  
Սիրէ աշխատութիւն, որ այդ վիճակին,  
Լինիս իսկ վայելող աշխարհն անվթար:

**Յ**ոյսն է մարդկանց սպրեցնող միջոցը,  
Նեղ օրերու մէջը նրանց սփոփանք,  
Յուսով է առնվում ամուր ամրոցը,  
Յուսոյ դէմ տկար են շղթան ու կապանք:

Մարդկանց խրախուսող, յոյսն է սպառազայ,  
Սպասումէ թէ իւր վարձը կ'ստանայ,  
Անյոյս աշխարհը անապատ կը դառնայ,  
Այս է թեթեւացնում ամենայն տանջանք:

Յուսով յաղթվումէ ամեն խոչնդոտ,  
Մաքուր հարթվումէ արտը քարքարոտ,  
Հրաշքներ են գործում քաջելը սրտոտ,  
Յուսով միտք չեն բերում մահը ու փորձանք:

Ջամալի, կեանք չունի մարդը յուսահատ,  
Նրա բռնած գործն է թոյլ ու անհաստատ,  
Մինչև անձնասպաններ տեսելեմ ես շատ,  
Այլ և կորցնողներ խիղճ ու պատկառանք:

**Ա**ղաչումեմ ս'վ սիրելի, միշտ քաղցր բարբառ լինիս.  
Բարբառ անուշ, անուշ ձայնով, ձայնովդ կիթառ լինիս,  
Ամենայն տեղ բարօրութեան սուրբ ճիւղեցը տարածես,  
Տարածես շատ, շատ պտղաւէտ, պտղաւէտ գաւառ լինիս:

Անունդ քաջ ու անարատ պահես, լինիս հեզ խոնարհ,  
Խոնարհ վարքով, վարքով համեստ, համեստ ու պատկառ լինիս,  
Ազնիւ բարքդ տեսնելով քոյ՝ ուրիշները քեզ դիմեն,  
Կիմեն սիրով, սիրով ամբիժ, ամբիժ լոյս կաճառ լինիս:

Եթէ կեանքդ ապահովել կամենումես ճշմարիտ,  
Ճշմարիտ գործ, գործդ ուղղէ, ուղղէ որ պիտառ լինիս.  
Ո՛վ Ջամալի զգուշութեամբ պահպանէ քեզ մշտական,  
Մշտական քեզ, քեզ պահէ հայ, հայ ու ուղղափառ լինիս:

56

Խ Ն Կ Ի Ր:

**Ո**վ քաջդ անուանի Հովուապետ բարի,  
Խնդրումէ քո հօտը առօյգ հովիւներ,  
Հեռացնել նրանց, որք են անարի,  
Ընդունել նոր ի նոր գիտուն ազնիւներ:

Գալերը շատացան կամին քեզ ատել,  
Քո ոիրելի հօտդ քեզանից զատել,  
Վաղ ունեցած ուխտդ իրանք հաստատել,  
Նորանով ստանալ փառք ու պատիւներ:

Ջամալիս հօտիդ մէջ եմ մի աննշան,  
Բայց խեղճ ու ցաւօղներ շատ կան ինձ նման,  
Մինչ ի մահ քեզանից հոգւով անբաժան,  
Թէ և ցոյց տան հազար խորին հաշիւներ:



57

Մ Ե Ր Ա Ն Յ Ե Ա Լ Ը:

**Ո**ւր են մեր նախնիքը, սիրելի հայեր,  
Որոնցից դողումէր Պարսիկ ու Քուշան,  
Մէկ ժամանակ էինք զովելի, հայեր,  
Ո՛ւր է այն քաջանուն Երուանդեան Տիգրան:

Պատմութիւնը մեզի կ'աւանդէ այսպէս,  
Կար Արշակ, Վաղարշակ, Վահէ Արտաշէս,  
Նրանց ազգի սիրով, կռիւն էր հանդէս,  
Ո՛ւր է Մամիկոնեան վեհ սուրբն Վարդան:

Մէթէ նրանց պէսներ չունինք մեր մէջ արդ,  
Որ լինին հայրենեաց համար պայծառ զարդ,  
Փառք Աստուծոյ, ունինք շատ բարերար մարդ,  
Որ պաշտպան են հոգւով Հայոց ազգութեան:

Ջամալի, հայերս ունինք հզօր Տէր,  
Թէ ունենանք ուսում, միութիւն և սէր,  
Կեանքերս պէտքէ տանք մենք ուսման նուէր,  
Որ ուսմամբ ճոխանայ մեր մայր Հայաստան:

58

Բ Ա Ր Ի Յ Ի Շ Ա Տ Ա Կ:

**Ո**վ մարդ, աշխարհի մէջ այնքան աշխատիր,  
Որ մի քանի բարի լիշատակ թողնիս,  
Փախիր վատութիւնից, հեռացիր, ատէ,  
Ջանք արն բարութեան օրինակ թողնիս:

Վատ կրքերուդ յաղթող ու տիրող եղիր,  
 Նեղութեան դիմացող-համբերող եղիր,  
 Ազգութեան, գիտութեան դու սիրող եղիր,  
 Գիտուններու մէջը նշանակ թողնիս:

Քիչ բանով գոհ եղիր ու բաւ համարէ,  
 Օգնիր նորան, ով որ քեզնից տկար է,  
 Զամալի, մտածէ, միշտ բան հնարէ,  
 Աշխատիր անունդ շարունակ թողնիս:

59

ՄԱՐԴՈՒ ԿԵԱՆՔԸ.

**Ո**չ մի մարդ չը հպարտանայ,  
 Իւր ունեցածների վերայ,  
 Որքան կուզէ պարարտանայ,  
 Վերջըն է որդերին ընծայ:

Ոչ լոյս դնէ հարստութեան,  
 Ոչ քաջութեան, ո՛չ գիտութեան,  
 Ոչ բաղդի, ո՛չ գեղեցկութեան,  
 Ըստորում է ցաւոց ծառայ:

Թերի է մարգուս փափազը,  
 Լացով առաջին նուազը,  
 Ասած է. «մէկի ճրագը,  
 Մինչևի լոյս վառ չի մնայ»:

Բոպէներով ունի ծիծաղ,  
 Տարիներով կայ անխաղաղ,  
 Պատրաստվումէ մահուան դազաղ,  
 Աշխարհի ձեռքից խաբեբայ:

Զամալի, աշխարհը բանտ է,  
 Մարդը նրան հնազանդ է,  
 Ծնած օրիցը պատանդ է,  
 Դահլիճ մահը է միշտ ներկայ:

60

Ն Ո Ր Տ Ա Ր Ի.

**Ո**ղջունումենք քո գալուստը,  
 Եկիր բարեաւ դու, նոր տարի,  
 Ապագայ կենաց ապրուստը,  
 Քեզնից սպասումենք բարի:

Լինիս նոր օր-շնորհաւոր,  
 Հայոց կենացը դարաւոր,  
 Երանի հայերս բոլոր,  
 Դիմենք քեզ հետ լոյս հնարի:

Թօթափենք հնութեան քողը,  
 Ստանանք շնորհաց ցողը,  
 Պայծառ արեգակի շողը,  
 Զը մնանք միշտ մէջ խաւարի:

Մտածենք մենք որքան ազատ,  
 Ունինք միջոց ուսման հաստատ,  
 Մեր հին կեանքը է մեզ խրատ,  
 Ո՛ւր մնանք թմրած-անարի:

Զամալի, չենք ունենայ վիշտ,  
 Թէ գործ բռնենք արդար ու ճիշտ,  
 Արարչին գոհութիւն տանք միշտ,  
 Որ հասանք լուսաւոր դարի:

Վ Ա Յ Ե Լ Մ Ո Ւ Ն Ք .

**Ո**ւրախացէք մարդիք ու վայելեցէք .  
 Աշխարհը բացի այդ ուրիշ բան չունի,  
 Խոհուն մտքով սորան լաւ քննեցէք,  
 Վայելչութիւնից զատ գովասան չունի:

Ոչ շատ շուալլ եղիք և ոչ շատ կրկիտ,  
 Ընկերութեան մէջը եղէք միամիտ,  
 Սէր ցոյց տուէք իրար, սրտով ճշմարիտ,  
 Աշխարհը սիրուց զատ լաւ պայման չունի:

Աւետարանը սուրբ, այսպէս կը ձայնէ,  
 «Առաջին պատուիրան՝ սէրը միայն է»,  
 Սողոմոնի խօսքով « բոլորն ունայն է»,  
 Զամալի, աշխարհը կապ՝ սահման չունի:

Ա Յ Ճ Մ Ե Ա Ն Ժ Ա Մ Ա Ն Ա Կ Ը .

**Ո**ւր է մեր հին ունեցած երջանիկ կեանքի շարունակը,<sup>1</sup>  
 Փոփոխուեց ամենայն մի բան եկաւ վատը փոխանակը, <sup>2</sup>  
 Հազար ու մէկ դառն ցաւեր բերեց իւր հետ ժամանակը,  
 Յառաջեց, ստացաւ պատիւ, անզգամ, լիրբ-անառակը,  
 Ճոխանալով վայելումէ յափշտակող աւազակը,  
 Ինչ որ կամի անում է, ըստորում շատ է օժանդակը:

1—2, ամեն տանց վերջում կտկնել:

Ճշմարտութեան հետևողը մի կողմով օգնական չունի,  
 Անարգ խօսքեր լսելուց զատ, իւր յարմար գովասան չունի,  
 Վիրաւոր շրջանից ընկեր ազատող սլահասպան չունի,  
 Առօրեայ կեանքի պիտուքներ, գոնէ իւր բաւական չունի:

Ունինք այժմ բաւականին պարօններ ու աղաներ սուտ,  
 Որոնք լեզուով, բարի գործոց տալիս են շատ ընծաներ սուտ,  
 Ունին իրանց միախորհուրդ ընկերներ ու ծառաներ սուտ,  
 Որ հարկաւոր ժամանակին լինին պաշտպան վկաներ սուտ:

Զամալի, աշխատիր, փրկիր, քեզի այս մեծ վտանգներէն,  
 Հեռացիր ստութեան եղած օգուտի արձագանքներէն,  
 Նրանից առաջ եկած իսկ ուսումի հրահանգներէն,  
 Մտածէ որ չունիս երբէք օգուտ չարի ժառանգներէն:

Բ Ա Ն Ա Ս Տ Ե Ղ Ծ .

**Ո**վ բանաստեղծ սիրելիւղ փափազդ խօսիր, թող լսէ,  
 Մշտական առջորուիւղ-կրակդ խօսիր, թող լսէ,  
 Ի ու կարօտով մաշվում ես, իսկ նա բնաւին չէ տեղեակ,  
 Կարծումէ մոռացել ես շխտակդ խօսիր, թող լսէ:

Ձեռ ու ոտդ պատրաստ են, մինչ անգամ աչքիդ լոյսը,  
 Ձոհելու իրան համար կտակդ խօսիր, թող լսէ,  
 Ներկայիս ոչ միայն դու, այլև շատերն են քեզի պէս,  
 Շատ տեղից քո ստացած նամակդ խօսիր, թող լսէ:

Ձը կարծէ միայն խօսք է, գործով էլ են ճշմարիտ,  
 Մօտ օրերիս անցքերդ-վիճակդ խօսիր, թող լսէ:

Քոյ Հարազատ սեփական կեանքիցդ ընծայ էլ տուիր  
Իւր անուանը, քանի Հատ գաւակդ խօսիր, թող լսէ:

Թող յաւիտեան յիշատակ մնայ ներկայ թիւր Հազար  
Ութը Հարիւր իննսուն ամեակդ խօսիր, թող լսէ,  
Ով Ջամալի, քո սիրելիդ շատ հին է ու պատուական,  
Իւր համար է ամեն մէկ առակդ խօսիր, թող լսէ:

64

ՎԱՏԵՐՈՒ ՎԵՐՋԸ.

**Ո**վ շողոքորթ կին գեղեցիկ շատերին զրաւեցիր,  
Շատերին էլ սուտ լուրերով մինչ երկինք համբաւեցիր,  
Սիրուն տեսքդ գրիր միջնորդ, անմեղ հոգիդ ծախելով,  
Խաբելով մոլորցուցիր ու կեանքերից զրաւեցիր:

Հեշտութիւնդ առաջ ամեն կամենալով մշտական,  
Լկտի վարքով, խենէշ բարքով սլար դալով կաքաւեցիր,  
Քաղցր լեզուիդ գաղտնի թոյնը սրտերի մէջ ցանելով,  
Վէրքերով վշտացուցիր, իսկ ախտերով շարաւեցիր:

Ամեն մէկին նոր սիրելու խօսեցար շատ գովասան,  
Քիչ ժամանակ անցնելուց յետ, վատ ասիր պարսաւեցիր  
Բայց Ջամալիս տեսաւ վերջդ ցաւերու մէջ դառնազին,  
Վատ գործերդ մնաց վաստակ, միայն դու պառաւեցիր:

65

ԳՈՎԵՍ ԱԶՔԵՐԻ.

**Ո**վ նազելի, խելքս գլխէս տարաւ պայծառ աչքերդ,  
Տեսնելուս պէս միտքս ցրուեց, այդ քու կախառ աչքերդ,

Չէի տեսել աշխարհի մէջ քեզ պէս սիրուն արարած,  
Աստուածային մեծ պարգև էր սևիկ փառփառ աչքերդ:

Ունքերիդ էլ արժանի էր խօսելի շատ գովասան,  
Բայց չեմ կարող, սիրաս քաշեց, կրակեց վառ աչքերդ,  
Ուշքս ինձէն այնպէս զնաց՝ չհասկացայ թնջ գունով,  
Փայլումէին քո բերերդ, սև էր կամ շառ աչքերդ:

Այսուհետև ինձէն եղած սխալին դու պարտական  
Եղիր, քանի մոլորուելուս եղաւ պատճառ աչքերդ,  
Իմ-Ջամալուս հարկաւոր է զգուշանալ-սթափիլ,  
Իսկ եթէ ոչ՝ բոլոր կեանքս կառնի կաշառ աչքերդ:

66

Ա Ղ Օ Թ Ք.

**Ո**վ Տէր Աստուած ամենակալ, ամենողորմ, գթառատ,  
Պարգևիր մեր թշուառ ազգին քոյ սուրբ սէրդ անարատ,  
Մի թողնիլ մեզ բաժանուելով կորնչինք աշխարհի մէջ,  
Տնւր մեզի շնորհ միութեան, ունենանք սէր, յոյս, հաւատ:

Մեր մեծ պապը Քեզ յուսալով, Քեզ էր պաշտում անասան  
Դու ոյժ տուիր պատերազմեց, սպանեց Բէլն ախոյեան,  
Նոյնպէս խնդրենք, նորա թուանց, տուր ոյժ ուսման անխափան,  
Քեզ պաշտելու և հայրենեաց լինինք ժառանգ հարազատ:

Մեր ազգի մէջ Քոյ մշտաբուզիս լոյսդ սփռէ անսպառ,  
ձանաչելով չարն ու բարին, սիրենք Մեծիդ անաչառ,  
Ընդհանուր մարդկութեան շարքում երևինք պարզ ու պայծառ,  
Ջամալուս ներքին վէրքերը մի թողուլ Տէր անփարատ:



ԹՇՈՒՍՈՒ ՎԻՃԱԿ.

**Զ** զիտեմ թէ միայն էս եմ վատաբաղդ,  
 Թէ էլի ինձի պէս ուրիշ խղճուկ կալ,  
 Միթէ ուրիշ վայելք, աշխարհ ապերախտ,  
 Չկար, որ կամեցար ցաւ ու վիշտ ընծայ:

Թշուառութիւն ու սուգ է միշտ ինձ մօտ շատ,  
 Վիճակ անտանելի, վիճակ յետին-վատ,  
 Թէև ապրուստ ունիմ, բայց սրտով աղքատ,  
 Ըստորում զիպուածներ ունիմ ակամայ:

Խեղճ Ջամալուս կեանքը ցաւով է բոլոր,  
 Օրըստօրէ հոգ կը ճարեմ նորինոր,  
 Շամիրամայ սիրոյ նետից վիրաւոր,  
 Համարեա, ապացոյց, ես ինքս եմ Սրայ:

ՀԱՅՐ ԱՒՐԱՀԱՄԻ ՊԱՏՄՈՒԹԻՒՆԸ.

**Պ**էտքէ մտքով լսել այս պատմութիւնը,  
 Որ պատմումէ մեզի Գիրքը սրբազան,  
 Որտեղ երևում է արդարութիւնը,  
 Նահապետին Աբրահամու գովական:

Հայրը կուռք էր պաշտում, անունն էր Թարա,  
 Այնպէս էլ մեծացուց իրան որդուն նա,  
 Բայց որդին ճանաչեց թէ մի Աստուած կալ,  
 Երբ դեռ բնակվում էր երկիրը Քանան:

Աստուած ասաց Աբրահամին, պատրաստուիր,  
 Թող բարեկամներդ, հայրենիքդ ընտիր,  
 Պէտքէ ընծայեմ քեզ մէկ ուրիշ երկիր,  
 Յոյց տալով ուղարկեց՝ երկիրը Խառան:

Աբրահամը ունէր սուկի, արծաթ շատ,  
 Գառը, ոչխար, եզինք, ամենքը առատ,  
 Մամբրէի անտառում բնակուեց հաստատ,  
 Ղովտ եղբօրորդու հետ, կտրելով սահման:

Աստուած երևեցաւ, ասաց, Աբրահամ,  
 Քեզ կը վարձատրեմ, կանեմ շատ խնամ,  
 Մի վախենալ, ես եմ քեզի բարեկամ,  
 Ամենայն բանի մէջ կլնիմ պահապան:

Աբրահամը ասաց, Ինչ պիտի տաս, Տէր,  
 Մահս մօտեցել է, եղել եմ ես ծեր,  
 Պիտի մեռնիմ, առանց որդի, առանց սէր,  
 Չունենալով ինձի ժառանգ սեփական:

Աստուած Աբրահամի սրտովը յարմար,  
 Խոստացաւ շատցնել սերունդը արդար,  
 Ինչպէս որ աստղերին չ'կայ թիւ համար,  
 Այնպէս էլ քոյ ցեղը կլնի խսկական:

Սառան երբ որ լսեց՝ հեզնելով ժպտաց,  
 Որովհետև այս խօսքին չը հաւատաց,  
 Բայց հայր Աբրահամը մտքումը ասաց,  
 Աստուծոյ մօտ չ'կայ անկարելի բան:

Երբ որոշեալ ժամանակը լրացաւ,  
 Սառան մի լաւ արու զաւակ ունեցաւ,

Մանկան անունը Իսահակ դրուեցաւ,  
Յայնժամ Աբրահամն էր հարիւր տարեկան:

Անցաւ քանի տարիք, մանուկն էր աճում,  
Աստուած ասաց, կատարէ ուխտդ անտրտում,  
Վեր առ Իսահակին, որ շատ ես սիրում,  
Մատաղ արձ որդիդ սիրուն-աննման:

Պատրաստուեց Աբրահամ, խոնարհ և զգաստ,  
Առաւ երկու ծառայ, փայտ, բարձած գրաստ,  
Գնաց Մօրէայի երկիրը պատրաստ,  
Յոյց տուած սարն ելաւ, բարձր բաւական:

Ասաց ծառաներուն, դուք կացէք այստեղ,  
Պէտքէ գնանք աղօթելու մենք այլ տեղ,  
Փայտերը շալակեց Իսահակն անմեղ,  
Հայր ու որդի գնումէին անբաժան:

Իսահակն հարցրուց հօր նպատակը,  
Մենք տանումենք փայտը, զոհի կրակը,  
Ձեռքդ ունիս բռնած սրուած դանակը,  
Ո՞ւր է մատաղացու ոչխարը նշան:

Հայրը ասաց, Տէրը տեսնում է, որդի,  
Իւր ընտրած մատաղը, սիրելի, յարգի,  
Ինչ որ Տիրոջ կամքն է պէտքէ կատարուի,  
Նա արել է ինձի հաստատ հրաման:

Երբ միասին լերան գագաթը հասան,  
Պատրաստուեցաւ Աբրահամը պատուական,  
Խարոյկ շինեց, փայտերը շարեց վերան,  
Կանգնեց զոհի համար կատարեալ սեղան:

Եկաւ ժամանակը մատաղի հիմա,  
Կապեց Իսահակի ոտ ու ձեռը նա,  
Այդպէս կապուած դրեց սեղանի վերայ,  
Առաւ ձեռը սրուած դանակը զաժան:

Հայր ու որդի մէն միայնակ իրար քով,  
Նայում են իրարու հոգիքը խռով,  
Հայրը որդուն պէտքէ զոհէ իւր ձեռքով,  
Մտածեցէք, ինչ ցաւալի տեսարան:

Բարձրացուց Աբրահամ զենման դանակը,  
Ի՞նչ կը լինէր այստեղ սորանց վիճակը,  
Յանկարծ ձայնեց երկնքից հրեշտակը,  
Ձեռքդ քաշէ, չը պէտքէ դիպչիս դորան:

Աբրահամ, քաջացիր և ուրախացիր,  
Աստուած ինչպէս ասաց, այնպէս արեցիր,  
Տիրոջ կամքը դու ի սրտէ յարգեցիր,  
Երբ չը խնայեցիր որդիդ սիրական:

Տէր Աստուած վերևից հաւատիդ նայեց,  
Նորա համար քեզ ու որդուդ խնայեց,  
Երկնքիցը մատաղացու ընծայեց,  
Հաստատ զոհ լինելը նորան է արժան:

Աբրահամը նայեց աչքերը յառած,  
Ընդունեց նա ինչ որ կամեցաւ Աստուած,  
Տեսաւ մէկ զեղեցիկ խոյ ծառից կախուած,  
Ամեն կողմով երևեցաւ դուրբական:

Աստուած ուղարկել է աննման ոչխար,  
Փառաւորուի նորա անունը արդար,

Գնաց այն ոչխարը ծառից բերեց վայր,  
Մատաղ արաւ նորան իւր որդու փոխան:

Հրեշտակը ձայնեց, Աբրահամ, կրկին,  
Դու չը խնայեցիր որդիդ միածին,  
Աշխարհի ազգերը քեզնով օրհնուին,  
Քոյ սերունդդ աւագից շատ բազմանան:

Աբրահամը առաւ իւր որդին սիրուն,  
Իջաւ սարէն, գտաւ և ծառաներուն,  
Ուրախացած սրտով դարձաւ դէպի տուն,  
Օրհնելով Աստուծոյն, եղաւ գոհաբան:

Մենք այս պատմութիւնից առնելով խրատ,  
Նեղութեան մէջ ընկնինք, չենք անիլ զանգատ,  
Տիրոջ պատուիրանը թէ պահենք հաստատ,  
Միշտ կը հասնի մեզի Աստուած օգնութեան:

Բաւական խօսեցար, Ջամալի երգիչ,  
Խորհուրդս պատմելու պէտքէ սուր զրիչ,  
Դու եկար զոհուեցար Տէր Յիսուս-Փրկիչ,  
Օրհնուի քոյ փառքդ մինչև յաւիտեան:

Ս Ի Բ Ո Յ Յ Ո Ր Դ Ո Ր .

**Ձ**անք ունենանք սիրելի,  
Կապուինք սիրով անթերի,  
Այնպէս վարուինք երկուքս,  
Երկու մարմին մէկ հոգի,  
Կեանք վայելենք ճշ, ճշ,  
Սիրալի ժամեր ճշ:

Արի մէկ տեղ սիրական,  
Իջնենք ծաղից բուրաստան,  
Քաղենք փնջելու համար,  
Վարդ ու մեխակ, բայասան,  
Կեանք վայելենք ճշ, ճշ,  
Սիրալի ժամեր ճշ:

Մեր խօսքերը լինին սէր,  
Ունենալով սուրբ պատուէր,  
Մենք խոստանանք յաւիտեան,  
Անձերս միմեանց տալ նուէր,  
Կեանք վայելենք ճշ, ճշ,  
Սիրալի ժամեր ճշ:

Աչիկներէդ սեւաթուր,  
Առնել տալով միշտ համբուր,  
Որ փնջիկը նախանձի,  
Հոտ տարածէ բոյր իբոյր,  
Կեանք վայելենք ճշ, ճշ,  
Սիրալի ժամեր ճշ:

Խ Ա Ղ Ա Ղ Կ Ե Ա Ն Ք .

**Ս**իրելիդ իմ համազգի հայ, շլանալ մի օտար կեանքով,  
Հարուստ մարդու ունեցած փառաւոր զարդ ու պաճուճանքով,  
Մտածէ որ ամենայն ինչ է անցաւոր ժամանակաւ,  
Լէր զգոյշ չը հասանել այսպիսի փառաց դու զրկանքով:

Սիրել պարտաւոր ես քրտամբ քո երեսնց անել վաստակ,  
Բարութեամբ վայելել հացդ համով քաղցր ախորժանքով,

Քնրնէ, շատ տեղեր կայ շատ հարստութիւն դիզած անչափ,  
Սակայն չունին խաղաղ ասլրուստ, ուտումեն հացը զգուանքով:

Ուրեմն ինչո՞ւ փափագումես սիրով անյագ այսպէս կենաց,  
Գու աշխատիր ճարել հանգերձ ու հաց, արդար սուրբ բաղձանքով  
Ջամալի, ինչ խրատունիս առաջ դու քեզ համոզէ ճիշտ,  
Յետոյ, եթէ կարող ես, ուրիշին հաղորդէ յարգանքով:

71

Ծ Ն Ն Գ Ա Վ Ա Յ Բ .

**Ս**իրումեմ քեզ սիրով բարձր, իմ սիրելի Հայաստան,  
Որովհետեւ եղելես դու ինձ հանդստեան որորան,  
Ոչ միայն ինձ, այլև համայն ազգիս Հայոց, մայր գթոտ,  
Ով ունի սիրտ հայ մարդկութեան քեզի է շատ սիրական:

Մեր նախնեաց սուրբ ոսկորները պահպանումես սուրբ աւանդ,  
Վսեմ, ազնիւ արձաններով, որպէս անդին ազամանդ,  
Քեզ սիրումեն ու պաշտումեն հայ սրտերը ջերմեռանդ,  
Հողդ, ջուրդ, մինչ քարինքդ մեզ համարեն պատուական:

Ուրախացիր, քեզ սիրողներ ունիս այժմ շատ ու շատ,  
Քեզ լիշելով պարծենումեն քո որդիքդ հարագատ,  
Չորս հազար ամ կեցար հաստատ, կաց չաւիտեան դու հաստատ,  
Քոյ Ջամալիդ, որքան կարէ, է քեզ ծառայ պիտեան:

72

Ղ Օ Շ Մ Ա Յ .

**Ս**իրելիք, իմ կեանքս, ահա ձեզ յայտնեմ,  
Որ մի ժամ, մի րոպէ, սիրտս չէ դադար,

Չը զիտեմ թնչ անեմ, կամ թնչպէս վարուեմ,  
Կորցրած լաւ կեանքիս չեմ գտնում մի ճար:

Ամեն կողմից ինձ պատել է ցաւ ու վիշտ,  
Տխուր, զիշեր, ցերեկ մտածումեմ ճիշտ,  
Սրտիս խորը թափանցումեն սուրբը միշտ,  
Չկայ այս ցաւերից փրկուելու հնար:

Ներքին մտածմունքս՝ մօտեցուց մահս,  
Մաշեց կեանքիս թելը ու հանգեց ջահս,  
Այսուհետեւ թնչ է աշխարհում շահս,  
Սիրելիներս էլ չեն ինձի մխիթար:

Ջամալուս ցաւերը ո՛չ թէ լեզուով է,  
Ճշմարտապէս՝ սիրտս ալետանջ ծով է,  
Սփոփիչ բաները ինձ համար սով է,  
Ել չի ազդում ուրախութիւն, երգ, քնար:

73

ՍԿԻԶԻՆ ՈՒ ՎԵՐՋԸ ՍԵ՛ ՏԱՌՈՎ ԵՐԳ .

**Ս**իրելի, ինձ սիրով մի մաշիլ այսպէս,  
Սիրովդ վառուելով կրումեմ վնաս,  
Սրտով ու աշխոյժով դուրս արի հանդէս,  
Սէգ սէրիցը մենք էլ չ'մնանք անմաս:

Սերտ սիրով կապուելով, առնենք խրախոյս,  
Սաստիկ սէրը չունի, երկիւղ, տարակոյս,  
Սապէս սիրոյ մէջն է երջանկութեան յոյս,  
Սովաւ ամեն բանից չենք մնալ պակաս:

Սողոմոնը թէև խաբուեցաւ, ափսոս,  
Սակայն, նա սիրոյ մէջ, չէր յատուկ հերոս,  
Սուրբ սէրը շատ անգամ կրկնեց Քրիստոս,  
Սոյն սիրով Զամալուց հեռի չը մնաս:

74

ԳՍՆԳՍՏ ՍԻՐԵԼՈՒՅ.

**Ս**էրդ սրտիս կրակ դարձաւ սիրեկան,  
Ո՞ր տեղից հանդիպեցար, ո՞վ սիրուն  
Քանի քեզի չէի տեսել, աննման,  
Օրս կանցնէր ուրախ, դադար, ո՞վ սիրուն:

Քեզ ճանաչելով, ընկայ սիրոյ ծուղակը,  
Այնուհետև փոխուեց կեանքիս վիճակը  
Քեզնով պիտի կատարուէր իմ փափազը,  
Բայց դու չեղար սրտիս յարմար, ո՞վ սիրուն:

Խեղճ Զամալիս երբ քեզ տեսաւ, գեղեցիկ,  
Գիշեր ցերեկ չունի դադար, աղունիկ,  
Անհնար է քեզնից զրկուիմ, անուշիկ,  
Ինձ արել ես դու սիրահար, ո՞վ սիրուն:

75

ԱՇԽԱՏԱՍԻՐՈՒԹԻՒՆ.

**Ք**նից զարթել, գործ սկսել պէտքէ, մեզի ճգնաժամ կայ,  
Օրը տարի, բոպէն ամիս պիտի հաշուել, կասեն հիմա,  
Թէ լուրջ կերպով մենք աշխատենք կունենանք բարի ասպագայ,  
Թէ ոչ՝ այս թանկ վայրկեանները կանցնին անհետ ու անխնայ:

Բաղդի խաղը դէպի մեզ հաշտ սկսելուն շատ հեռու չէ, 1,  
Գործը որքան դժուար թուի, այնքան դժուար, ահարկու չէ: 2,

Մարդկանց բաղդը փոփոխուելուն, մեզի հազար օրինակ կան,  
Մէկը եթէ աղքատանայ, չի մնայ այդպէս լաւիտեան,  
Թէ խելքը գլուխը ժողվէ, նայէ գործին միշտ անխափան,  
Ղրացոցէս քանիսները աշխատեցան լաւ օր գտան:

Գիշեր ցերեկ թէ աշխատենք, թափենք արիւն, թափենք քրտինք,  
Մենք մեր ուժով գործի կանգնենք, հաշտ աչքով կը նայէ երկինք,  
Շատ ենք տեսել մեր աչքերով, յետ են ընկել շատ առաջինք,  
Փրկչի անսուտ հրամանն է, առաջ կուգան սրբան յետինք:

Զամալի, մօտիկ օրերս մեզ աւետեաց լուր կ'սպասէ,  
Ուրիշների արածները մեզի համար խրատ, դաս է,  
Հաստատ սրտով գործ անողին, բարի վիճակ անպակաս է,  
«Իու քեզ օգնես՝ Տէրն էլ կօգնէ», փորձուած առածը կասէ:

76

Մ Ի Ի Շ Տ Ա Ջ Ա Տ.

**Ի**նչո՞ւ հեռացար ինձանից սիրուն սիրական դու,  
Կեանքիս պահապան դու.

Հասիր, նազելի իմ տկարիս, լէր օգնական դու,  
Օգուտ զանազան դու.

Անշուշտ գիտեմ ես, ինձնից հեռու փառքդ է պայծառ,  
Լեզուդ անոյշ բառբառ.

Գարձիբ դէպի ինձ, թողիր միայն, շատ բաւական դու,  
Ինձ, իմ գովական դու:

Բաւ է փափագով տանջուիմ ես քաշելով ցաւ, տապ,  
Այսքան կրեմ տագնապ.

1—2, Ամեն տանց վերջում կրկնել:

Միրոյդ ձեռնցը, սոխակի պէս լամ, վարդարան դու,  
Ո՛հ իմ բուրաստան դու.

Այսքան ժամանակ էիր հոգւոյս հետ դու բարեկամ,  
Քոյ սէրդ էր յարաժամ,

Այդ իսկ աղազաւ տուիր սէրդ ինձ հիմնական դու,  
Հոտով բալասան դու:

Գիտեմ կը գթաս, ինձ հետ էլի սէր կը հաստատես,  
Ցաւս էլ կ'փարատես.

Քանզի ամենայն ժամ խնամող ես բնական դու,  
Ազնիւ բանական դու.

Երգիչ Ջամալիս սպասելով միշտ գալուդ համար,  
Երբէք չունիմ դադար,

Ե՛կ իմ սիրելի ամեն սիրոյս վերջ ու վաղճան դու,  
Մեծ պատուոյ արժան դու:

77

Բ Ա Ղ Գ.

**Ք**եզ քնչպէս ընդունեմ, կամ քնչպէս գովեմ,  
Չես անում լաւութիւն ինձ բնաւ, բաղդս,  
Ահա պարզն ասեմ, քեզնից խռով եմ,  
Ուզումես ինձ անես վատհամբաւ բաղդս:

Նախնիքս ասումէին չես հանգիստ-խաղաղ,  
Մի աչքով կոյր էիր, մի ոտքով էլ կաղ,  
Աղէքսանդր ու ձինգիզխան, Աննիբաղ,  
Քեզնով փառք ստացան՝ ոչ սակաւ, բաղդս:

Ջամալիս չեմ ուզում քեզանից այնքան,  
Գոնէ տուր ինձ մի փոքր ինչ աստիճան,

Այսքանով կը լինիմ քեզնից բաւական,  
Օրերս անցանեն միջակ, լաւ, բաղդս:

78

Օ Ր Օ Ր Օ Յ Ի Ե Ր Գ.

**Ք**նիր որդեակ, սիրուն մանկիկ,  
Քնիր մեծանաս դու շուտ շուտ.  
Մի լար, ննջէ, քնով քաղցրիկ,  
Քնիր մայրդ մատաղ հոգուդ:

Հանդարտիր, անոյշ զաւակս,  
Գեղեցիկ-քնքոյշ որդեակս,  
Մայրդ է զգոյշ, հոգեակս,  
Արթուն, քեզ վերայ ունի գուլթ:

Արարիչն անէ քեզ խնամ,  
Մեծանաս ճանչես բարեկամ,  
Հայ ազգիդ պիտանի անդամ  
Լինիս, ունենաս մեծ օգուտ:

Մի լար, մի տրտմեր սիրտ մօրդ,  
Քեզ վերայ է յոյսը հօրդ,  
Երանեն քոյ ծնած օրդ,  
Տեսնեն քեզ մեծացած անսուտ:

Մեծացիր, լեր, ընծայ ազգիդ,  
Կարգն հին կեանքը հայ ազգիդ,  
Տես վիճակը ներկայ ազգիդ,  
Փութն օգնել խեղճ Ջամալուդ:

ՂԱՐՍԵՅՈՒ ՏՐՏՈՒՆՋԸ.

**Մ**իր հին վախժը ըսիմ, լաւըմ իմացէք,  
 Հիմի ամեն բանն էլ գէշի դարձիր է,  
 Ավալըմ տնիրս լիքը, հասկըցէք,  
 Ղարսայ ցորնով աշխարհքը կշտացիր է:

Վինձ ու պղտիկ իրան չափը ճանչէր կը,  
 Կնիկ մարդը ասլուռով, ամընչէր կը,  
 Ժամը լիքն էր, եր կոչնակը կանչէր կը,  
 Թաժա մարդոց հաւատնիրն էլ պակսիր է:

Գրկիցը գրկըցին աղբօր պէս սիրով,  
 Իրար տուն կապրէինք օրով ու շաբթով,  
 Հիմիկվայ մարդէքը իրար խաբէլով,  
 Մէկը մէկին հաւատալը անցիր է:

Եխտիար Մկօն իմ, ցաւիրս գուլամ,  
 Ել չին ճանչիր ազգական ու բարեկամ,  
 Լարով առածնիրս, դարձիր է դըրամ,  
 Մինք գէշըցանք, զամբթնիրս էլ կարիւր է:

ԳԻՒՂԱՅՈՒ ԳԱՆԳԱՏԸ.

**Մ**այիս ամսում բացուած կարմիր վարդերս,  
 Հիւսիսի սառ քամին մէկէն խամբեցուց,  
 Կանանչացած, հասկեր բռնած արտերս,  
 Հարաւիցը խորշակ դիպաւ չորացուց:

Անիրաւ հիւսիսը սաստիկ սուլելով,  
 Պտղատու ծառերիս ծաղիկը թափեց,  
 Հարաւային Սամու-եէլին փչելով,  
 Բոլոր արօտատեղ-մարդերս լափեց:

Մէկ տարի հիւսիսը անուամ է իւրը,  
 Միւս տարին հարաւը թափում է հուրը,  
 Կարծես թշնամի են իւրաքանչիւրը,  
 Ծառներս չորացաւ կտրեցին ջուրը:

Չեն հարցընում հասածը կամ տհասը,  
 Գեռ չը փչած, արգէն բռնում է զողս,  
 Յուրտը դարկեց տանձ ու խնձոր, կեռասը,  
 Տաքութիւնից ժանգը տարաւ խաղողս:

Իմ բաղդիցը այսպէս է մեր երկիրը,  
 Որ հողմերը փոփոխակի բանում են,  
 Երևում է այս է ճակատագիրը,  
 Բաժինս խլելով առնում տանում են:

Ինձի բան չէր անի կարկուտ, հեղեղը,  
 Եթէ այս հողմերից չը վնասուէի,  
 Հիմա լիքը կ'լնէր իմ տուն ու տեղը,  
 Գորանց տուած վնասից թէ փրկուէի:

Սորանց ձեռքից ես ընկելեմ կրակը,  
 Ոչ ոք չի հասկանում սրտիս ցաւերը,  
 Անտանելի իմ կեցութեան վիճակը,  
 Խեղճին չեն մտածում բաղդով լաւերը:

Միայն արտս, այգիս չէ, որ փչացան,  
 Հիմա պատմեմ սրանցից էլ ցաւային,

Լաւ օրերս համարեա թէ վերջացան,  
Յետագայ խօսքի մէջ կայ ևս աւելին:

Գարնան օրեր՝ թեթևացրած շորերը,  
Պաղ քամուցը հիւանդացան որդիքս,  
Խորշակիցը խիթը ընկաւ փորերը,  
Սատակեցան գառներըս ու մաքիքս:

Մի օր մէկ գիւղացուց լսեցի այսպէս,  
Որ պատմումէր ու սկսում հեկեկալ,  
Քամիներից զանգատ էր անում պէս պէս,  
Ջամալուս յայտնի չէ, ուղիղ՝ թէ սխալ:

81

Թ Ղ Թ Ա Խ Ա Ղ.

**Խ**նչքան մարդիք քո ձեռքիցդ, անիրաւ,  
Գործից ընկած, խղճուկ, դարտակ, թղթախաղ,  
Տուած տուն, կայք, արծաթ, ոսկի, մինչ հալաւ,  
Տեսնկացած ու խայտառակ, թղթախաղ:

Երբ շրջապատումեն նոքա սեղանը,  
Երբէք միտ չեն բերում գործը ու բանը,  
Մոռացնող ամօթն ու դերդաստանը,  
Անբաղդ թողնող քանի զաւակ, թղթախաղ:

Բարեկամին հեռացնում են վանելով,  
Շատն էլ փողը յարդի նման ցանելով,  
Հազար մի կերպ խարդախութիւն անելով,  
Ձեռնածու են տեսակ տեսակ թղթախաղ:

Կծու խօսքով մէկ մէկու սիրտ դաղումեն,  
Եթէ բաղդը ժպտաց, քիչ ծիծաղումեն,  
Տասը անգործ, եթէ հինգ մարդ խաղումեն,  
Մտիկ անող աննպատակ, թղթախաղ:

Ես չը տեսայ մէկ մարդ քեզնից բաւական,  
Հայհոյումեն՝ անդգայ ես, անպիտան,  
Մէջքդ կատրում, վերագ դնում են նշան,  
Թուղթդ կանեն միշտ ալլանդակ, թղթախաղ:

Որքան ժամեր կլանող ես դու՝ ի դուր,  
Վայ այն մարդուն, որ քեղի է անձնատուր,  
Տանողն էլ, տարուողն էլ անհանդիստ, տխուր,  
Չունին բնաւ խաղաղ վիճակ, թղթախաղ:

Ով քու համդ չէ տեսել, շատ երանի,  
Այնպէս մարդն է դովասանքի արժանի,  
Քեզ սիրողին ցաւը շուտով կը տանի,  
Ծերացնող անժամանակ, թղթախաղ:

Դու ես պատճառ արբեցութեան շատ մարդու,  
Դու ես անող անձնասպան շատ մարդու,  
Խելք թռցնող ինքը իրան շատ մարդու,  
Հատացնող փողի քսակ, թղթախաղ:

Քոյ երեսից լինումէ շատ գողութիւն,  
Նաև առաջ գալիս մարդասպանութիւն,  
Որքան մարդուց խլել ես հարստութիւն,  
Ու ձգել ես մեծ պարտքի տակ, թղթախաղ:

Խնչքան կռիւ խաղամիջից դուրս կ'գայ,  
Քիթ ու պռունկ ջարդել, ծեծել անխնայ,



Դատի, բանտի մատնուած շատ մարդ տեսայ,  
Շինող խարդախ ու կեղծ մուրհակ, թղթախաղ:

Թէ օձիքը ձեռքդ տուեց արթունը,  
Վնասուելով կը կոտրուի անունը,  
Լաւ խաղացող-ամենամեծ գիտունը,  
Վերջընէ մերկ, առանց ստակ, թղթախաղ:

Ամեն խաղցող յոյս ունի թէ՛ տարած է,  
Բայց չը գիտէ ոտով-գլխով կորած է,  
Անհաց, անջուր երկու օրով նստած է,  
Կնքուարտումէ ծանր ու բարակ, թղթախաղ:

Երբ տուն դառնայ՝ մռայլոտ է պատկերը,  
Աչքին մութը երևումէ լապտերը,  
Որքան ուրախ գիմաւորէ ընկերը,  
Նա չի սիրում խօսք ու կատակ, թղթախաղ:

Ընկած ծնողների, եղբարց աչքիցը,  
Մէկ հատ սև փող դուրս չի գալ գրպանիցը,  
Զաւակներից, մինչ սիրած կնկանիցը,  
Կառնի անարգանք փոխանակ, թղթախաղ:

Շտապելով նա մտնումէ անկողին,  
Երազումն էլ խաղ է անում առանձին,  
Երբ արթնացաւ, միտքն է փող ճարել կրկին,  
Գուցէ այսօր դայ աջողակ, թղթախաղ:

Տասնով կ'տայ հարիւր մանէթ արժողը,  
Օգուտ չունի առնողն, ինչպէս ծախողը,  
Կը քանդուի, ալլոց տունը քանդողը,  
Զուր վաստակը կ'լնի կամակ, թղթախաղ:

Նարտին, վէզը, ընկերներդ բազմաթիւ,  
Քեզնից զանգատվումեն, պահանջում հաշիւ,  
Ամեն տեղ մէջ ընկնող, հարսանիք-պատիւ,  
Վարկ կոտրելու դու ընդունակ, թղթախաղ:

Անիծուէր քոյ հնարողիդ արմատը,  
Չը վիճակուէր մարդկանց, այդ վատ արատը,  
Քեզ հետևող հարուստը, թէ աղքատը,  
Կուտեն հարուած, կուտեն ապտակ, թղթախաղ:

Զամալ, դու էլ դորանց շարքում շարուել ես,  
Ընկերներուդ կամքով այդպէս վարուել ես,  
Փող չես խաղցել, գինի, օղի տարուել ես,  
Էլ մի խաղալ դու շարունակ թղթախաղ:

ԳՍՂԹՍԿԱՆՈՒԹԻՒՆ.

**Շ**ատ հին ժամանակից մենք խեղճ հայերս,  
Տեսել ենք քեզնից ցաւ, գաղթականութիւն,  
Մինչ այժմ զոհ կուտանք անվերջ, հայերս,  
Չը տեսած օրեր լաւ, գաղթականութիւն:

Վաղուց լցուեց Հայով հին Բիւզանդիան,  
Բայց դորանց մեծ մասը էր վաճառական,  
Մէկ մասը Իտալիա, միւսը Պարսկաստան,  
Մինչև Խրիմ հասաւ, գաղթականութիւն:

Այլ և Հնդկաստանում գործ սկսեցին,  
Այդտեղ էլ մի ժամանակ լաւ փայլեցին,  
Քիչ միջոցից լետոյ՝ այդ էլ կորուցին,  
Դէպ Չինաստան եղաւ գաղթականութիւն:

Թողած հայրենիքը, տուն ու տեղ թողած,  
 Ամիսներով ճամբայ ընկած-հեռացած,  
 Մօտ երկհարիւր հազար հողի կուլ գնաց,  
 Լեհաստանը կերաւ, գաղթականութիւն:

Մեր պապերն էլ Տաճկաստանից գաղթեցին,  
 Հազար ու մէկ արգելքների յաղթեցին,  
 Որքան տանջանք ու նեղութիւն կրեցին,  
 Քոյ ձեռքից անիրաւ, գաղթականութիւն:

Շատը ցրտից, շոքից են հիւանդացել,  
 Օտար օգի ծանրութիւնը չեն տարել,  
 Որքաններն էլ 'ի զուր մեռել են-թաղուել,  
 Չունեցած լաւ համբաւ, գաղթականութիւն:

Այսօր էլ հարիւրով դեռ տուրը կ'տայ  
 Հայութիւնը, չը խրատուող-անդգայ,  
 Վերջերքս հասել են մինչ Ամերիկայ,  
 Անտուն ու անհալաւ, գաղթականութիւն:

Ջամալի, այդ ախոր մեղնից վերանար,  
 Կաչէինք մեր հողին, նստէինք գաղար,  
 Բաւ է, մէկէն հարստանալու համար,  
 Կեանքերս տանք գրաւ, գաղթականութիւն:

**Մ**էկ գեղեցիկ, փորձով տեսայ, որ սիրոյ մէջ հաստատ է,  
 Փորձով տեսայ, որ սիրոյ մէջ հաստատ է, հարազատ է,  
 Որ սիրոյ մէջ հաստատ է, հարազատ է, համեմատ է,  
 Հաստատ է, հարազատ է, համեմատ է, անարատ է:

Նորա համար կեանքս կուտամ սիրով ընծայ մշտական,  
 Կեանքս կուտամ սիրով ընծայ, մշտական է աննման,  
 Սիրով ընծայ, մշտական է, աննման ու զովական,  
 Մշտական է, աննման ու զովական, պայազատ է:

Իմ Ջամալուս կանգնող պաշտպան ամեն ինչով յարմար է,  
 Կանգնող պաշտպան, ամեն ինչով յարմար է ու արդար է,  
 Ամեն ինչով յարմար է ու արդար է, իսկ մեծ սար է,  
 Յարմար է ու արդար է իսկ մեծ սար է, Արարատ է:

**Մ**ասիս սարի ստորոտում պապերս,  
 Ունեցել են պարտէզ, այգի, մեծ գետին,  
 Այլև կալք ու կալուածք բազում, պապերս,  
 Իրանց գիւղում-մեծ ընտանիք-առաջին:

Հոյակապ տները նման պալատի,  
 Բոլոր դրացոց մէջ յայտնի փայլումէր,  
 Ողորմացող անցնող-գարձող աղքատի,  
 Շատ մարդ նրանց ճոխ սեղանից վայլումէր:

Պարտէզը գեղեցիկ, աննման, սիրուն,  
 Հազարերանգ ծաղիկ բացուած զանազան,  
 Շրջապատը ցանկով պատած զարդարուն,  
 Միջին աղբիւր, մարմարոնեայ աւազան:

Ունեցել են ձգած ընդարձակ այգի,  
 Ծառները շար ի շար անչափ բիւրաւոր,  
 Հաշիւը չէ եղել պտուղի-մրդի,  
 Տեսնողներուն զարմանք բերող, փառաւոր:

Եղները հարիւրով, ոչխարներ հազար,  
 Գոմէշներ շատ, կթու քանի՞ հատ մատակ,  
 Հաւեր, սագեր, բադեր անթիւ, անհամար,  
 Ամեն տեսակ ձիանք, քանի՛ երամակ:

Միշտ եղել են նշանաւոր զերդաստան,  
 Բոլոր շրջակայքում պատուով, անուանի,  
 Ամեն կողմից ստացել են դովասան,  
 Շատերը տուել են նրանց երանի:

Քանի այսպէս աջողակ էր զործերը,  
 Գրացիքը քաշվումէին նրանցից,  
 Զայն ու ծպտուն չէին հանում քովերը,  
 Բայց թէ զաղտնի՝ ճաքվում էին նախանձից:

Բաղդաւորին նախանձ պակաս չի լինիլ,  
 Այսպէս է աշխարհը, սա անկասկած է,  
 «Զուրն էլ քնի, բայց թշնամին չի քնիլ»,  
 Հների այս խօսքը փորձուած առած է:

Պապերիս մէջ կընկնի մի կերպ դառնութիւն,  
 Այլևս չեն իրարու հետ համաձայն,  
 Երբ լսումեն թէ՛ կայ այսպէս դառնութիւն,  
 Պատրաստվում են բոլոր թշնամիքն համայն:

Սկսում են որոմ ցանել նրանց մէջ,  
 Եւ աջողվում բաժան-բաժան անելու,  
 Պայման կանեն մինչև վերջը իրանց մէջ,  
 Կռուով-դաւով այդ գեղիցը հանելու:

Մէկ կողմից եզ ու ձի, ոչխար գողացան,  
 Միւս կողմից քանդեցին սլարտէզն ու այգին,

Անհամար կայք-ապրանք աւարի առան,  
 Միմեանց մէջ կիտեցին, անելով բաժին:

Տները, շէնքերը արին աւերակ,  
 Աղբիւրների յորդ ջրերը կտրեցին,  
 Ծառները չորցուցին ու տուին կրակ,  
 Մինչև անգամ կենդանի մարդ այրեցին:

Պապերս զգուելով՝ թողին տուն ու տեղ,  
 Ակամայ զաղթեցին մի հեռու երկիր,  
 Ամեն բանից անցան գեղեցիկ-շքեղ,  
 Բայց ցաւ էր թողնելը երկիրը ընտիր:

Վերջապէս, համարեա նրանց մեծ մասը,  
 Խմբիկներ կազմելով ջոկ ջոկ ցրուեցան,  
 Գնացողն էլ, մնացողն էլ վնասը  
 Գիպչելով, հողերին հաւասարուեցան:

Գրացիքը կոշտ ու կոպիտ-վայրենի,  
 Իրանք էլ այդ բանից չը տեսան օգուտ,  
 Մնացողին պահելով ինչպէս գերի,  
 Վարվում էին նրանց հետը շատ անգութ:

Պապերս նեղութիւն կրելով այդքան,  
 Տանջանքները տանում էին անվեհեր,  
 Տարիներ անցնելով թշնամիքն ընկան,  
 Նոցա համար դարձեալ եկաւ լաւ օրեր:

Թոռները աչք բացին, տեսան որ զրկուած  
 Մնացել են, կայքերն ուրիշն է տիրել,  
 Աշխատողին նորից նոր կօզնէ Աստուած.  
 Ու չի թողնիլ խղճուկ, պէտքէ համբերել:

Ջամալիս յոյս ունի կը շինեն տուն, շէնք,  
Հող էլ ձեռք կը բերեն քանիմ օրավար,  
Այժմ փառք Աստուծոյ, ճշմարիտ օրէնք  
Տրուել է զրկուածին, դատումէ արգար:

ԿԱՐՆԵՑԻ ՄՈՒԿՈՒԶԸ:

Ձանմ, ես ա չիտեմ, թէ աս ինչէն է,  
Հաղլին գործը աջող, մերը ձախ կերթայ,  
Չլլի՞ ասպէս ճակտի գիրը վերէն է,  
Օր, տայմայ մեր գործը թարս ու կախ մնայ:

Ուրիշները քիչ ա դատին, բաղդ ունին,  
Ղամաթները պօլ է, օր զանկին գլլին,  
Չէ նէ՛ ես կը ճանչեմ, քանի քանիին,  
Ղայտով գործմ ա չունին, իրանք խափխաբայ:

Ինչի՞ պիտի ատպէսները երէվան,  
Համա պատիւ վալլեն աշխրքիս վրան,  
Գիշեր, զօր դատողին էտէվէն խնտան,  
Ըսեն, ինչքան դատի, պարտք ունի կէնայ:

Կարնեցի Մուկուչն եմ, դարդերս շատ է,  
Մեզի էնօղներուն, հախ Տէրը դատէ,  
Ինչքան գուղես լաց-թաց երէ, գանկրտէ,  
Մէկիմ ա պէտքը չէ, վէ՛վ կը իմանայ:

ԽՄ ԽՐԱՏԸ ՈՐԳԿԵՐԱՆՑՍ:

Սիրելի որդիքս, մի քանի պատուէր  
Տամ ձեզի լիշատակ, որ լինի խրատ,  
Ոչ ոքի մի ատէք, այլ ունեցէք սէր,  
Հեռացէք չարագործ մարդիքներից վատ:

Ձեզանից մեծերուն, միշտ տուէք պատիւ,  
Տնտեսութեան համար սորուեցէք հաշիւ,  
Առուտուրի միջով ուղիղ ու ազնիւ  
Եղէք, անուններուդ չը բերէք արատ:

Խոնարհեցէք իշխողի հրամանին,  
Չը ճնշէք տկարին ու պարտապանին,  
Չար բերանից ելած ուխտ ու պայմանին,  
Գուք կատարող եղէք, խօսքերդ հաստատ:

Չը լինիք արբեցող, չը վատնէք գուժար,  
Միշտ սրտով ու խղճով կը մնաք դադար,  
Ամենքդ մի գործի կպչելով լարմար,  
Աշխատասէր եղէք, չէք մնայ աղքատ:

Գատաստանատնից ման եկէք հեռու,  
Վարուելու մէջ եղէք միշտ քաղցր լեզու,  
Երաշխաւոր չ'լինիք բնաւ մէկ մարդու,  
Թէ փողով, թէ կեանքով, չ'ընծայէք հաւատ:

Թէ վկայ կանչուեցաք, ուղիղ խօսեցէք,  
Չը վախենաք, ճշմարիտը պատմեցէք,  
Աչառութիւն խնդրողներից հեռացէք,  
Թող պատժուին նրանք մեղքին համեմատ:

Գողն ու մարդասպանը չի ունենայ կեանք,  
Աքսորում կը փթի, քաշելով տանջանք,  
Հպարտ մեծախօսը կը կրէ փորձանք,  
Խարդախը վտանգից չի մնալ ազատ:

Մէկի վատ խօսքերը միւսին միք տանի,  
Խռովութեան պատճառ՝ երբէք միք լինի,  
Խորհրդապահ լինողն է շատ գովելի,  
Ամեն տեղ յարգ ունի մարդը հարազատ:

Նորասիրութիւնն է շատ աներ քանդող,  
Իսկ շռայլութիւնն էլ հաստատ աւերող,  
Այլև ծուլութիւնն է կեանք փչացնող,  
Շէնը հիմնայատակ անող-անապատ:

Ձը լինիք կասկածոտ ու փոփոխամիտ,  
Պատասխաններ չը տաք կրքոտ ու կոպիտ,  
Սրտերդ, խօսքերդ մաքուր-ճշմարիտ,  
Թէ պահէք, կը լինիք, արդար-բաց ճակատ:

Տիրոջ պատուիրանը, Տիրոջ օրէնքը,  
Պարտաւոր են պահել անխախտ ամենքը,  
Բարութիւնը լինի ձեր ձեռքի զէնքը,  
Կը լինիք օրհնուած հաստատուն արմատ:

Այս խօսքը միտ առէք, (Գաւիթի տասձ.)  
«Արդար մարդու որդին չի մուրանայ հաց»,  
Թէ բան է, գործերդ աջող չը գնաց՝  
Այս աւուր վաղը կայ, չ'լինիք լուսահատ:

Աստուած ասաց. « Հայր ու մայրը պատուեցէք, »  
Այնուհետև « քնկերներիդ սիրեցէք, »

Իմ պարտքս է խրատել, սրտով պաշտեցէք  
Հայրենի կրօնը, չը լինիք անջատ:

Ամեն առ ու ծախսում եղիք խնայող,  
Ապագայ կունենայ մարդը ծրածող,  
Իսկ բարեգործութեան, երբ լինիք կարող,  
Առատ նուէր տուէք, չը լինիք ժլատ:

Զեր Ջամալի հօրից ձեզ աւանդ մնայ,  
Վերը գրած պատուէրներս անթիքայ,  
Գու միշտ Հայկի, Սրտաշէսի մօտ կարդայ,  
Իմ անդրանիկ որդի, մտաբաց Տաճատ:

### Վ Ե Ր Զ


Ժամանակի բերմունքը . . . . .	1
Քուլեսա . . . . .	2
Պանդուխտ . . . . .	3
Սիրահարի փափագը . . . . .	—
Աղերս առ սիրելին . . . . .	4
Լաւ ծարգը . . . . .	5
Առ սուրբ կոյսն . . . . .	6
Նախանձ . . . . .	7
Խրախոյս . . . . .	—
Դրամ . . . . .	8
Աննման ծնունդ . . . . .	9
Հանելուկ . . . . .	—
Առօրեայ կեանք . . . . .	10
Անկիրթը . . . . .	11
Ինքնապաշտպանութիւն . . . . .	—
Չափազանցութիւն . . . . .	13
Արհեստ . . . . .	—
Գարուն . . . . .	14
Յաճ ծարգը . . . . .	15
Սիրելիս . . . . .	16
Ծաղկանց դիրքը . . . . .	—
Երեք բան . . . . .	17
Ամբարտաւանը . . . . .	18
Զմեռ . . . . .	—
Հետևողութիւն . . . . .	19
Թէճնիս . . . . .	—
Հեռատեսութիւն . . . . .	20


Հանելուկ . . . . .	21
Խնդիր Զեփեռուին . . . . .	—
Սուտ ազգասերներ . . . . .	23
Սոխակին . . . . .	24
Իմ կեանքը . . . . .	—
Լաւ ընկեր . . . . .	25
Հայ աղջիկ . . . . .	—
Ժլատը . . . . .	26
Կասկածոտները . . . . .	27
Խոհեմութիւն . . . . .	28
Կրօն . . . . .	—
Քնար . . . . .	29
Ուսուցիչ . . . . .	—
Մարդկանց դիրքը . . . . .	30
Առ սիրելիս . . . . .	31
Աշրդ Երրինի երգի [Ժարգման . . . . .	32
Հանելուկ . . . . .	33
Երկու աղջիկ . . . . .	—
Սէր բարոյական . . . . .	37
Անցեալ կեանքից . . . . .	38
Վերջը մտածել . . . . .	—
Հաւասարութիւն . . . . .	39
Մարդասիրութիւն . . . . .	40
Խեղճ հովիւը . . . . .	—
Ուսումն . . . . .	41
Ծուլն ու Աշխատասէրը . . . . .	42
Յոյս . . . . .	45
Գիվանի . . . . .	—
Խնդիր . . . . .	46

Մեր անցեալը . . . . .	47
Բարի լիշատակ . . . . .	—
Մարդու կեանքը . . . . .	48
Նոր տարի . . . . .	49
Վայելմունք . . . . .	50
Այժմեան ժամանակը . . . . .	—
Բանաստեղծ . . . . .	51
Վատերու վերջը . . . . .	52
Գովեստ աչքերի . . . . .	—
Աղօթք . . . . .	53
Թշուառ վիճակ . . . . .	54
Հայր Աբրահամի պատմութիւնը . . . . .	—
Սիրոյ յորդոր . . . . .	58
Խաղաղ կեանք . . . . .	59
Ծննդավայր . . . . .	60
Ղօշմայ . . . . .	—
Սկիզբն ու վերջը սէ տառով երգ . . . . .	61
Գանգատ սիրելուց . . . . .	62
Աշխատասիրութիւն . . . . .	—
Միւշտագատ . . . . .	63
Բաղդ . . . . .	64
Օրօրօցի երգ . . . . .	65
Ղարսեցու տրտունջը . . . . .	66
Գիւղացու զանգատը . . . . .	—
Թղթախաղ . . . . .	68
Գաղթականութիւն . . . . .	71
Սաարանճ զիվանի . . . . .	72
Պատկեր հին կեանքից . . . . .	73
Կարնեցի Մուկուչը . . . . .	76
Իմ խրատը որդկերանցս . . . . .	77

1. Die ...  
 2. Die ...  
 3. Die ...  
 4. Die ...  
 5. Die ...  
 6. Die ...  
 7. Die ...  
 8. Die ...  
 9. Die ...  
 10. Die ...  
 11. Die ...  
 12. Die ...  
 13. Die ...  
 14. Die ...  
 15. Die ...  
 16. Die ...  
 17. Die ...  
 18. Die ...  
 19. Die ...  
 20. Die ...







17154-17158

X

B

W

X

W

2013

